

ՉԱՅՆ

ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յայաստանյան բազմաճյուղի և բազմադեմ մամուլի մեջ «Չայն համշենական» թերթը գալիս է լրացնելու մի բաց, որը մինչ այսօր դուրս է մնացել ընդհանուր ուշադրությունից: Խոսքը Համշենի և համշենահայության մասին է: Անշուշտ, եղել են փորձեր ստեղծելու նման մի թերթ, սակայն, ցավոք, ինչ-ինչ պատճառներով մտահղացումը չի իրականացել, կամ սկսված գործն ընդհատվել է: Բացը մասամբ լրացրել են վերջին 10-15 տարիներին Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքներում լույս տեսնող թերթերը, սակայն խոսքը աշխարհի չորս ծագերում սփռված համշենահայությանը համախմբող մամուլի մասին է, ինչն էլ իրականացնելու խնդիր է դրել իր առջև «Չայն համշենական» թերթը:

Այս նախաձեռնությունը տրամաբանորեն բխում է այն իրողությունից, որ հայ իրականության մեջ, անգամ գիտական ու քաղաքական որոշ շրջանակներում Համշենի ու համշենահայության մասին պատկերացումները շատ աղոտ են: Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականության հետևանքով Ցեղասպանության տարիներին Տրապիզոնի նահանգի հայության վերապրած բեկորները ապաստան գտան Հայաստանում, Վրաստանում, Աբխազիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Հունաստանում և այլ երկրներում պահպանելով մայրենի լեզուն ու կրոնը, իսկ տարբեր դարերում բռնի իսլամացածների մեծ մասը այսօր էլ ապրում է իր պատմական հայրենիքում, շատերը պահպանել են լեզուն, ազգային ծեսերը, ավանդույթներն ու բանահյուսությունը:

Վերջին մեկ-երկու տասնամյակների ընթացքում գիտական շրջանակներում բավական մեծացել է ուշադրությունը այս հարցերի նկատմամբ: Հայ, ռուս, եվրոպացի, ամերիկացի, թուրք, վրացի և այլ հեղինակներ հրատարակել են մի շարք աշխատություններ՝ նվիրված Համշենի պատմությանը, բարբառին, բանահյուսությանը, ազգագրությանը և այլ հարցերի: Տարբեր երկրներում այս խնդիրների շուրջ կազմակերպվում են գիտաժողովներ և քննարկումներ: Սակայն այս ամենը մատչելի է միայն մասնագետների և հետազոտողների նեղ շրջանակներին:

«Չայն համշենական» թերթը իր ընթերցողներին ոչ միայն հանգամանորեն կտեղեկացնի այս գործընթացների մասին, կհրատարակի համշենագիտական արժեքավոր ուսումնասիրություններ, կծանոթացնի Համշենի պատմությանը, մշակույթին, ազգային ավանդույթներին, ծեսերին ու սովորույթներին, բանահյուսությանը, նշանավոր համշենահայերի կյանքին ու գործին, այլև կանդրադառնա խնդրո առարկա բազմաթիվ ու բազմաբնույթ այլ հարցերի, լայնորեն կլուսաբանի համշենահայ համայնքների ազգային-հասարակական կյանքի տարբեր բնագավառների խնդիրները:

Մոռացության չի մատնվի նաև Համշենի գեղեցիկ և հարուստ բարբառը, որով կիրառական կլինի բանահյուսության արժեքավոր նմուշներ և բարբառով գրող հեղինակների ստեղծագործություններ:

Ընթերցողը թերթի էջերից բավարար տեղեկություններ կստանա Հայաստանի և Սփյուռքի, ՌԴ Կրասնոդարի երկրամասի հայության և արևազահայության ազգային կյանքի կարելի իրադարձությունների, Հայաստանի «Համշեն» ՀԲ կազմակերպության գործունեության մասին և այլն:

Խմբագրությունը լիահույս է, որ ընթերցողներն իրենց թղթակցություններով մասնակցություն կունենան այս կարելի գործին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2004թ. հունիսի 12-ին տեղի ունեցավ «Համշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպության հերթական համագումարը, որը քննարկեց վերջին երկու տարում կատարված աշխատանքները և ընդունեց առաջիկա գործունեության ծրագիր: Հատկապես կարևորվեցին Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքների հետ կապերի ամրապնդման, այնտեղի հայկական դպրոցներին աջակցելու, Հայաստանի բուհերում կրթություն ստացող համերկրացի ուսանողների միություն ստեղծելու, հայաստանաբնակ համշենահայերի ազգագրական երգի-պարի համույթ ունենալու, թերթ հրատարակելու խնդիրները:

Համագումարում ընտրվեց խորհուրդ հետևյալ կազմով՝ Իվան Կրեաշյան, Սերգեյ Վարդանյան, Սահակ Լևոնյան, Նազիկ Սարգսյան, Միսաք Կանուզյան, Կարինե Յալանուզյան, Վիկտոր Սոլախյան, Աբել Հակոբյան, Կարլ Յալանուզյան, Ռաֆիկ Ղազարյան, Նորայր Քեչյան, Սաթիկ Միսակյան, Հայկազուն Ավրոյան: Խորհուրդն ընտրեց նախագահություն, նախագահ (Ի. Կրեաշյան) և տեղակալներ (Ս. Վարդանյան, Ս. Լևոնյան, Ն. Սարգսյան):

ՈՐՊԵՍ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

Այս օրերին, երբ նորաստեղծ թերթի անվան փնտրտուքով էինք զբաղված, շատ առաջարկներ լսեցինք, բայց ի վերջո ընտրվեց «Չայն համշենականը». շատերին ծանոթ անուն էր, ոմանք էլ ասում էին, թե այդ վերնագրով տանը գիրք ունեն, կային մարդիկ, որ այդ վերնագրով ոչ թե 1, այլ 2, 3, նույնիսկ 4 գիրք ունեին: Իսկապես՝ նույնանուն



Սերգեյ Վարդանյանը աշխատել է տարբեր խմբագր., ԳԱԱ հնագիտ. և ազգագր. ինստիտուտում, 1991-2002 թթ.՝ ՀՀ կառ. առընթեր կրոնի գործերի պետխորհրդի նախ. տեղակալ: Հրատարակել է «Հրեղեն ծին», «Հայոց մայրաքաղաքները», «Արեւածաղիկը», «Հայաստանի մայրաքաղաքները», «Թագավորի երազները» և այլ գրքեր: Երկու տասնամյակից ավելի է զբաղվում է համշենահայության պատմության և ազգագրության հարցերով: 1984-ին Միջին Ասիայում գտել է կրոնափոխ համշենահայերի. նրանց բանահյուսությունը հրատարակել է «Չայն համշենականի» երրորդ հատորում: 1991-92 թթ. եղել է «Լույս Համշենի» թերթի գլխ. խմբագրի տեղակալ, 1992-2002 թթ.՝ «Համշեն» հայրենակցականի փոխնախագահ, 2004-ին վերընտրվել է: «Չայն համշենականի» գլխավոր խմբագիրն է:

Համշենի բանահյուսության նմուշներ՝ հեքիաթներ, երգեր, մանկներ, հանելուկներ, առածներ և ասացվածքներ (գրառողներ՝ Ա. Չեյթունյան, Բ. Թոռաքյան, Հ. Գալայջյան):

«Չայն համշենական» առաջին ժողովածուն շատ ջերմ ընդունվեց հայրենիքում և համշենահայության շրջանում, և այդ հաջողությունից ոգևորված որոշվեց հրատարակել երկրորդ գիրքը, որը «Սովետական գրող» հրատարակչությունը լույս ընծայեց ութ երկար տարիների սպասումից հետո՝ 1979թ.: Գիրքը կազմել էր գրական խմբակի անդամ, համշենահայ ճանաչված մտավորական և երկարամյա մանկավարժ Անդրանիկ Չեյթունյանը: Ուրախալի էր, որ երկրորդ ժողովածուում ընդգրկվել էին ավելի շատ գրողներ. առաջին գրքից ծանոթ հեղինակների կողքին տպագրված էին Ա. Սարգսյանի, Ս. Թահմազյանի, Մ. Քոչկանյանի արձակ և չափածո գործերը, ինչպես նաև Հ. Խանջյանի, Սեդրակ Թահմազյանի, Սարգիս Ազատի, Ա. Չամյանի, Ա. Երմոյանի, Մ. Քեչյանի, Ջ. Չաքրյանի, ինչպես նաև կին գրողներ Մարիամ Խանջյանի ու Մարիամ

Ավետյանի բանաստեղծությունները: «Չայն համշենականի» երկրորդ գրքում ևս ներկայացված էին Համշենի բանահյուսության նմուշներ՝ մանկներ, առածներ և ասացվածքներ, երգեր, հեքիաթներ (բանահավաքներ՝ Ա. Չեյթունյան, Մ. Քոչկանյան, Մ. Մինասյան, Բ. Թոռաքյան):

Գրքի նաև գիտական նշանակությունն էին շեշտում երաժշտագետ Մարգարիտ Բրուտյանի 1972թ. ղեկավարած գիտարշավի հավաքածուից տպագրված տաս հարսանական երգերն ու մանկները: Այս հատորի հրատարակությունից ուղիղ տասը տարի անց՝ 1989թ. «Խորհրդային գրող» հրատարակչությունը լույս ընծայեց ժողովածուի երրորդ գիրքը (կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը): Գրքի առաջաբանը անդրադառնում էր համշենահայության անցյալին ու ներկային: Ժողովածուում տպագրված էին Աշոտ Քոչքոնյանի, Անդրանիկ Չեյթունյանի, Ալեքսանդր Անտոնյանի, Սիրավան Սևունու, Մինաս Թահմազյանի, Գուրգեն Խաչատրյանի, Փայլակ Թոռաքյանի ստեղծագործությունները և Հարություն Գալայջյանի գրածամբ համշենցի վրիժառու Ջհան Կարապետի հուշերը: Գրքում ներկայացված էին նաև



«ՍԿԻՋՔԸ ՆԱԽՈՐԴ ԷՋՈՒՄ Այս հատորում ներկայացված էին Կրասնոդարի երկրամասի «Չայն համընկան» գրական խմբակի և Աբխազիայի «Սևծովյան այգաբաց» գրական միավորման շուրջ 30 անդամների՝ Ա. Քոչքոնյանի, Ա. Գրիգորյանի, Ա. Երմոյանի, Մ. Թահմազյանի, Ա. Չեյնունյանի, Ա. Չամյանի, Գ. Խաստյանի, Ղ. Դովաջյանի, Գ. Խանջյանի, Կ. Սունգուրյանի, Ա. Քեհյանի, Փ. Թռչալյանի, Մ. Դեմիրճյանի, Ա. Քոչկանյանի, Վ. Յայյանի, Մ. Քեչյանի, Ա. Մինասյանի, Ս. Էքսուզյանի, Ա. Գրբաշյանի, Գ. Ասլանյանի, Ս. Շիշմանյանի չափածո ստեղծագործությունները, ինչպես նաև Ս. Թահմազյանի, Ա. Սարգսյանի, Ա. Ջիդարյանի, Դ. Մնացականյանի, Զ. Քեչիշյանի, Մ. Սահուլյանի, Մ. Քոչկանյանի, Ս. Կարագոզյանի, Վ. Ավետյանի արձակ էջերը, նաև եղիշե Չարենցի մասին Գուրգեն Խաչատրյանի և Ավետիք Խասիկյանի մասին Անդրանիկ Չեյնունյանի հուշերը: «Չեյնունյանյան պատուհանի դրվագներ» բաժնում տպագրված էին Ջինկի գավառի Թերմեի գավառակում գործած Կարա Խաչիկի խմբի մասին Ջորիկ Քեչիշյանի «Չանկիրիչցիների երգը» իրապատումը, ինչպես նաև Օրդուի գավառակի Բաշարդախ գյուղի ֆիդայիների ղեկավար Քուչուք Արթինի հուշերի հիման վրա նրա խմբի մղած մարտերի մասին Միքայել Մինասյանի և Զարուբյուն Կալայջյանի «Քուչուք Արթինը» իրապատումը:

Չխախտելով ավանդույթը՝ երրորդ հատորում նույնպես ներկայացված էր Չամչենի բանասիրությունը, բայց այս անգամ 1944թ. Աջարիայի սահմանամերձ գյուղերից Միջին Ասիա քաղաքում կրոնավորի համընկանցիներից 1984թ. և 1987թ. գրառված երգերն ու ինքնաթղթերը (բանաստեղծություններ)՝ Ա. Վարդանյանի:

«Չայն համընկան» չորրորդ հատորը նույնպես լույս ընծայվեց տասնամյա ընդմիջումով՝ 1999-ին, հրատարակիչը «Վերնատուն» հրատարակչությունն էր, ժողովածուն կազմողներն ու խմբագրողները՝ Ս. Գալստյանն ու Լ. Կարապետյանը:

Գիրքը բացվում էր «Պատմական ակնարկով» (հեղինակ՝ Ս. Վարդանյան), որում տարբեր դարերում հայկական պետականության մաս կազմած Սև ծովի հարավային ափերը դիտարկվում էին որպես հայ ժողովրդի օրրաններից մեկը: Թուրքական ջարդարարների դեմ հայերի պայքարին և Աբխազիայում մղված գոյապահպանման ջանքերին էին նվիրված Ջորիկ Քեչիշյանի երկու հոդվածները: Վարդան Քեհյանյանի «Վերին հայկական Լոռ» պատմաերկրաբանական ակնարկը պատմում էր հայերի կողմից գյուղի բնակեցման առաջին տասնամյակների մասին, իսկ «Մուղովկայի «Թեջնոց բույնը»» հոդվածը (հեղինակ՝ Ս. Վարդանյան) նվիրված էր 1974թ. Մուղովկա գյուղի հայկական դպրոցը քանդելու պատմությանը և ուժացման դեմ տեղի բնակիչների և մի քանի մտավորականների պայքարին:

Ժողովածուում ընդգրկված էին Կրասնոդարի երկրամասի «Չայն համընկան» և Աբխազիայի «Սևծովյան այգաբաց» գրական միավորումների անդամների՝ Ա. Քոչքոնյանի, Մ. Թահմազյանի, Գ. Խաստյանի, Գ. Խանջյանի, Ղ. Դովաջյանի, Ա. Բահարյանի, Գ. Թորոսյանի, Գ. Ռահմանյանի, Զայ-Նորենցի, Ա. Երմոյանի, Գ. Օհանյանի, Ս. Սևունու, Կ. Սունգուրյանի, Ա. Անտոնյանի, Ե. Շաշիկյանի, Ա. Քոչքոնյանի, Գ. Զովակի, Ա. Դեմիրճյանի, Գ. Քեչյանի, Լ. Քուլյանի, Թ. Քոչկանյանի, Գ. Ավջյանի, Ս. Կոնդակչյանի, Վ. Միքայելյանի բանաստեղծությունները, ինչպես նաև ռուսագիր գրողներ Գրիգոր Մազլումյանի և Նիկոլայ Ռավոյի (Ռաֆայել Օհանյանի) ռուսերեն բանաստեղծությունները: Ուրախալի էր, որ գրքում ներկայացված էր նաև կին գրողների մի ծաղկաբույլ՝ Զայկանուշ Կուլյան, Սիրվարդ Մելքոնյան-Լոբյան, Զայկանուշ Աբրահամյան, Սեդա Բաղդասարյան, Անահիտ Սաքոյան:

Արձակի բաժնում տպագրված էին Ս. Թահմազյանի, Ա. Սարգսյանի, Ս. Կարագոզյանի, Մ. Քոչկանյանի, Գ. Խաչատրյանի և Վ. Կանսուզյանի պատմվածքները: Ի տարբերություն մախորդ հատորների՝ գիրքն ուներ նաև թարգմանական բաժին, ուր հայերեն էին թարգմանված աղբյուրի պոետ Վալերի Կլեբանովի բանաստեղծությունները, իսկ Վ. Կլեբանովն էլ իր հերթին էր ռուսերեն թարգմանել Ա. Քոչքոնյանի, Գ. Զովակի և Գ. Թորոսյանի ստեղծագործությունները: Գիրքն ամփոփում էր հայ գրողների բարեկամ, լազարևակցի աղըդ արձակագիր Խալիբ Տլիֆի «Հանդիպում չերքեզի հետ» պատմվածքը:

«Չայն համընկան» հինգերորդ հատորը (կազմողներ՝ Ս. Գալստյան, Ս. Վարդանյան) պատրաստ էր տպագրության 2003-ին և պետք է հրատարակվեր Բարձրաշնորհ Տ. Մեդրոպարը. Աշխատի հոգաբարձությանը, բայց, ցավոք, սրբազանի անժամանակ մահվան պատճառով գիրքը ցայժմ անտիպ է:

Եվ այսպես, «Չայն համընկան» ժողովածուի առաջին գրքի հրատարակությունից անցել է 33 տարի: Այս ընթացքում, ցավոք, մեզանից անդարձ հեռացան մի շարք գրողներ՝ իրենց ստեղծագործությունները մեզ թողնելով հիշատակ:

Այդ տարիներին ահռելի փոփոխություններ եղան քաղաքական ասպարեզում. անկախացան ԽՍՀՄ հանրապետությունները, ծայր առավ վրաց-աբխազական հակամարտությունը, որից դեռևս արյուն է ծորում, Կրասնոդարի երկրամասի հայերի գլխով և փոթորիկներ անցան. այդ բոլորը վաղ թե ուշ կարտացույցվեն նաև տեղի գրողների ստեղծագործություններում:

Այժմ արդեն Կրասնոդարի երկրամասում և Աբխազիայում տպագրվում են հայերեն թերթեր և գրքեր, բայց, կարծում ենք, անկախ դրանից, հայրենիքում հրատարակվելը ցանկացած հայ գրողի երազանքն է, և ուրեմն «Չայն համընկան» թերթը միշտ սիրով կհյուրընկալի նրանց:

ՍԵՐՔԵՅ ՎՈՐՈՆՅԱՆ

ԱՆՑՅԱԼԻՑ

**ԳՅԻՆ ԵՎ ԳԵՐԱԳՈՅՆ ԳՈՂԱՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՄԻՋՈՑՈՎ ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ ՄԻ ՔԱՅԱՆԱ ԵՎ Ս ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ԿՐԱՍՆՈՂԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԾԻՍԱԿԱՏԱՐ ՔԱՅԱՆԱ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ *
2 ՓԵՏՐՎԱՐԻ 1960Թ.**



Նորին Վեհափառություն Վազգեն Ա. Սրբազնագույն Կաթողիկոսի հանձնարարությամբ այսուհարգո խորհրդի ուշադրությանն ենք հանձնում հետևյալ պարագան.

1. Շուրջ չորս ամիս է, ինչ Կրասնոդարի հայոց Եկեղեցին չունի մշտական քահանա՝ նախկին քահանա Անանյանի հրաժարումից հետո: Հավատացյալ համայնքը գրկված է կրոնական ծիսակատարությունների հնարավորությունից և գրկված հոգեկան մխիթարությունից:


Կրասնոդարի Կրոնից Գործերի լիազորը վճռակաճորեն հրաժարվում է գրանցել և քահանայագործության արտոնագիր տալ Թեմական խորհրդի կողմից հրավիրված Տ. Զուհիկ քահանա Ջահանգուլյանին, առանց որևէ հիմնավոր պատճառաբանության:

Կրասնոդարի Կրոնից Գործերի լիազորը վճռակաճորեն հրաժարվում է գրանցել և քահանայագործության արտոնագիր տալ Թեմական խորհրդի կողմից հրավիրված Տ. Զուհիկ քահանա Ջահանգուլյանին, առանց որևէ հիմնավոր պատճառաբանության:


ընդունված: Սակայն այստեղի Լիազորը ևս ամիսներ ի վեր ամեն կերպ արգելք է հանդիսանում նախկին Ս. Լուսավորիչ Եկեղեցու երկու քահանաներին կատարելու իրենց պարտականությունները, պատճառաբանելով, թե Եկեղեցին պետք է ունենա միայն մեկ քահանա: Վերջին երկու քահանաներից նա վերցրել է գրանցման վկայականները և կտրուկ կերպով արգելում է այդ քահանաներին ծեսեր կատարել Եկեղեցում, անտեսելով հավատացյալների ու Թեմական խորհրդի աղերսանքներն ու խնդրանքները:

Մեծարգո Պրն. Գասպարյան, Ցավով հայտնելով այս ամենը, Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր խորհուրդն խնդրում են վերոհիշյալը հաղորդել ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնից Գործերի խորհրդին առ ի գիտություն և ի տնօրինություն, այն իմաստով, որպեսզի Ռոստովի գործող Եկեղեցու համար գրանցվի ևս մեկ քահանա, իսկ Կրասնոդարի Եկեղեցուն արտոնվի ունենալու իր ծիսակատար քահանան:

Հարգանքը և ողջունիվ, Ատենապետ Գերագույն Հոգևոր խորհրդի՝ Սահակ Արքեպիսկոպոս Դիվանապետ Մայր Աթոռի՝ Գ. Առաքելյան




ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ



* «Բանբեր Հայաստանի արխիվների», 2001թ., N1, էջ 116-118:

**ԳՅԻՆ - ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈՂԱՐ խորհուրդը
ՀԵՔԻՆ - ՀԻՄՅՆ Նախարարների խորհրդին
առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը
ԿՊԳԻՆ - ԽՍՀՄ Նախարարների խորհրդին
առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի
խորհուրդը**



Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստովի) Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին, 1783-1807թթ.

ԱՐԱՋԱՆԳ

ԱՐԽԱԳԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԱՀԱՆՁ

Արխագիայի երբեմնի շեն ու բարեկեցիկ հայկական համայնքն այսօր դիմագրավում է դժվարություններ, որոնք հետեանք են համակարգային փոփոխությունների և վրաց-արխագական հակամարտության: Պետք է ասել, որ դրանք ընդհանուր են երկրի բոլոր բնակիչների, բոլոր ազգությունների համար, սակայն հայկական համայնքի կյանքում հետեանքներն առավել զգալի են: Խոսքը բոլորովին էլ պետական քաղաքականության մասին չէ, այլ՝ ստեղծված օբյեկտիվ իրավիճակի:

Բանն այն է, որ թեև պետությունը, իր սուղ հնարավորություններով անզամ, ամեն ինչ անում է հայկական դպրոցները պահպանելու համար, սակայն տարեցտարի պակասում է հայ աշակերտների թիվը, փակվում են դպրոցներ:

Վրաց-արխագական պատերազմից առաջ երկրում կար 50 հայկական դպրոց, պատերազմից հետո մնաց 41 դպրոց: Սա նահանջի առաջին փուլն էր, որի պատճառները հասկանալի էին. հազարավոր հայեր արտագաղթեցին երկրից, վրաց բանակի զորանոցների վերածված դպրոցների մեծ մասը ավերվեց, թալանվեց: Պատերազմից հետո աստիճանաբար սկսվեց վերականգնման գործընթացը: Դպրոցները վերաբացվեցին, որոշներն էլ միավորվեցին:

Սակայն ի հայտ եկան նոր խնդիրներ, նոր դժվարություններ: Արխագիան հայտնվեց քաղաքական, տնտեսական, մասամբ էլ կոմունիկացիոն մեկուսացման մեջ, որի հետեանքով գրեթե խզվեցին Հայաստանի հետ ունեցած նախկին կապերն ու հարաբերությունները: Նյութական դժվարին պայմաններում ապրող մարդիկ ի վիճակի չէին իրենց երեխաներին ուղարկել Հայաստան՝ բարձրագույն կրթություն ստանալու: Այնինչ բոլոր հարցերը ավելի հեշտ էր լուծել հարեան Կրասնոդարի երկրամասում և Ռուսաստանի այլ շրջաններում: Սկսվեց նահանջի երկրորդ փուլը. կտրուկ նվազեց հայկական դպրոց գնացողների թիվը՝ վերջին 4-5 տարում 7400-ից իջնելով 2828-ի: Մի շարք դպրոցներ հայտնվեցին փակվելու վտանգի առաջ:

2003-2004 ուստարվա արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

Գագրայի շրջանում՝ 11 դպրոց (որից մեկը Գագրա քաղաքում), 994 աշակերտ Գուրաուտայի շրջանում՝ 5 դպրոց, 279 աշակերտ:

Սուխում քաղաքում՝ 1 դպրոց, 199

աշակերտ: Սուխումի շրջանում՝ 7 դպրոց, 388 աշակերտ: Գուրիպաշի շրջանում՝ 9 դպրոց, 827 աշակերտ:



Օչանջիրի շրջանում՝ 2 դպրոց, 141 աշակերտ: Այսպիսով դպրոցների ընդհանուր թիվն է 35, աշակերտների՝ 2828:

Անցած տարում չբացվեց հայաշատ Գագրա քաղաքի և Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի առաջին դասարանը, իսկ ոչ պակաս հայաշատ Սուխումի Գ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի առաջին դասարանում սովորում էր ընդամենը 4 աշակերտ: Եվ սա այն դեպքում, երբ ոչ հայկական դպրոցներում սովորում է մոտ 7000 հայ երեխա:

Բերված թվական տվյալներից պարզ է, որ առաջիկայում փակվող դպրոցների թիվը կմեծանա:

Պատմական հանգամանքների բերումով և մեր պատմական հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում, և Սփյուռքի տարբեր գաղթօջախներում մենք ստիպված կան պարտադրված ունեցել ենք բազմաթիվ կորուստներ: Սակայն այս դեպքում արդարանալու ոչինչ չունենք: Մեզ ոչ ոք չի պարտադրում փակել մեր դպրոցները: Ավելին՝ Արխագիայի իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը լավագույն պայմաններ է ստեղծում պահպանելու համար դպրոցները, որոնցից դուրս եկած հազարավոր մտավորականներ, գրողներ, մշակույթի գործիչներ իրենց կարելու ներդրումն են ունեցել հայ դպրության, գիտության ու մշակույթի բարգավաճման գործում:

Մենք ուղղակի պարտավոր ենք հաղթահարել բարոյականային այս ժամանակավոր ճգնաժամը և մեզ պարտադրված փորձությունից արժանապատվորեն դուրս գալ:

Այն դժվարությունները, որոնց մասին խոսվեց, անշուշտ ունեն իրենց բացասական ազդեցությունը, նաեւ հասկանալի են, սակայն ամեն ինչ դրանցով չի պայմանավորված: Այլապես ինչպե՞ս բացատրել այն, որ եղեռնից մի կերպ ազատված մեր նախնիները, զրկված լինելով որեւէ աջակցությունից, Հայաստանի հետ կապից, գտնվելով ծանր բարոյահոգեբանական ու նյութական վիճակում, իրենց առաջին պարտականությունը համարեցին նոր բնակավայրերում՝ Արխագիայում և Հյուսիսային

Հայկազուն Ավրոյանը ծնվել է 1957թ. Զավախքում: Միջնակարգ դպրոցն ավարտել է Սուխումում, այնուհետև սովորել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում, որն ավարտել է 1981-ին: Երկար տարիներ աշխատել է ԵՊՀ-ում, այժմ դասավանդում է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայում, բանասիրական գիտ. թեկնածու է, դոցենտ, զբաղվում է ԱՊՀ հայկական համայնքների կրթամշակութային հարցերով:

Կովկասի այլ շրջաններում, իրենց իսկ սուղ միջոցներով կառուցել նախ դպրոցներ ու եկեղեցիներ, և հետո միայն ուշադրություն դարձնել կենսական այլ



Հայկական դպրոցի առաջին դասարանցիներ Լուսանկարը՝ Զավեն Խաչիկյանի

խնդիրների:

Այսօր Արխագիայի հայկական համայնքն ամեն ջանք գործադրում է՝ պահպանելու դպրոցները, վերականգնելու Հայաստանի հետ նախկին կապերը կամ հաստատելու նորերը: Դպրոցները Հայաստանից ստանում են դասագրքեր, ցանկացողները կարողանում են Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում առանց ընդունելության քննությունների (հարցազրույցով) շարունակել ուսումը:

Սակայն շատերը, հատկապես քաղաքային մեր հայրենակիցները, գերադասում են հեշտ ճանապարհը՝ օտար դպրոցը, որը հետեանք է ոչ միայն մեր թվարկած դժվարությունների: Պատճառների մեջ պակաս կարելու չէ նաեւ այն հանգամանքը, որ հայկական դպրոցները չունեն նյութատեխնիկական հնարավորություններ, համակարգչային (կոմպյուտերային) դասարաններ, շատ դպրոցներ ունեն ուսուցիչների պակաս և այլն:

Համոզված են, որ մեր կարող հայրենակիցների մասնակցությամբ, բոլորիս ջանքերի միավորումով այս հարցերի մեծ մասը կլուծվի: Արխագիայի հայ համայնքն այն հազվագույտ համայնքներից է, որտեղ 100 տարուց ավելի գործել են հայկական դպրոցները հայաստանյան դպրոցների առարկայացանկով, ծրագրով ու դասագրքերով: Սրանք լիարժեք հայկական դպրոցներ են, որոնց գոյության համար մեծ չափով պարտական ենք նախորդ սերունդներին: Եվ մի՞թե մենք պատմության մեջ պետք է հիշատակենք որպես այդ դպրոցները մեր ձեռքով, մեր ցանկությամբ փակած, մեր պապերի ջանքերը ի դերեւ հանած, մեր ինքնությունից հրաժարված սերունդ, որը վաղը պետք է ավելի մեծ ջանքեր գործադրի՝ կիրակնօրյա դպրոցներ բացելու և Մեսրոպյան սուրբ այբուբենը այդ դպրոցներում սովորելու համար, ինչը, ցավոք, մեր աչքի առաջ կատարվում է այլ համայնքներում:

Դժվարությունները, ի վերջո, հավերժական չեն, և առաջին անգամ չէ, որ մեր հինգհազարամյա պատմության մեջ մնա վիճակներում ենք հայտնվել: Սակայն, եթե այս նահանջը չկասեցնենք, մեր կորուստները կլինեն անվերադարձ. կդրոցներն այն, ինչի համար ապրել, տքնել ու պայքարել ենք հազարամյակներ՝ մեր ինքնությունը:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՎՐՈՅԱՆ

ԱՐԽԱԳԻԱՅԻ

ԱՐԽԱԳԻԱՅԻ, գյուղ Արխագական ԻՍՄ Գագրայի շրջանում, Բզիբ գետի ափին, Գագրայից 15 կմ հարավ-արևելք: 4138 բն. (1968), հայեր, վրացիներ: Կուլտմտեսության հիմնական զբաղմունքն է ծխախոտի, եգիպտացորենի մշակությունը, այգեգործությունը, բանջարաբուծությունը: Ա-ում կա թռչնաբուծական ֆաբրիկա: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, ակումբ, բուժկայան, կինո: Հայերը եկել են Սամսունից, 1913-ին:

Մեր գյուղի մասին այս տողերը Հայկական սովետական հանրագիտարանի առաջին հատորում հրատարակվել են ուղիղ 30 տարի առաջ՝ 1974-ին: Այն ժամանակ ես դեռ ծնված չէի: Ծնողներս Ալախաձե են եկել 1980թ., ինչպես տեղացիները, նրանք ևս մաքրել են փշերը, չորացրել ճահիճներ և կառուցել իրենց տունը: Այն ժամանակ նրանք 22-23 տարեկան էին՝ իմ տարիքին: Ալախա-

ձեում կյանքը դրախտային էր, բոլորն ապրում էին ինչպես մի ընտանիք, չնայած այստեղ կային և հայեր, և ռուսներ, և վրացիներ, և արխագներ, և հրեաներ, և թաթարներ, և ուզբեկներ ...

Սակայն օրերից մի օր, ավելի ստույգ՝ 1992թ. օգոստոսի 14-ին, վրացական մի զորաջոկատ երկաթգիծը վերանորոգելու պատրվակով ներխուժեց Արխագիա և ... կռիվը տևեց մեկ տարի և մեկ ամիս: Երկրորդ ամսին ազատագրվեց Գագրան, իսկ մեկ տարի անց մայրաքաղաքը՝ Սուխումը: Արխագական նոր ձևավորված աշխարհազորը հաղթեց վրացական կանոնավոր բանակի զերակշիռ ուժերին: Կռվում արխագներին հավասար մարտնչում էին նաև հայերը: Մեր գյուղացիներից շատերն ընկան հերոսի մահով: Շատ ավերածություններ տեսավ երկիրը: Լաբրա գյուղում ես եղա կռվից 10 տարի անց: Երբ գյուղ մտա, ինձ թվաց, թե դեռ պատերազմ է: Երբեմնի շեն տներից մնացել էին միայն քարե պատերը, կարծես



դրանք կիսավարտ էին: Տներից մեկի առջև՝ ծառին հենած, մնացել էր մի մահճակալի ցանց: Երևի ավարը շատ էր եղել, և դա չէին կարողացել տանել: Կային նաև շրջանաձև շարված քարեր, երևի մատուցելու համար, նրանց մոտ ընկած էին ձկան պահածոյի դատարկ տուփեր: Կռվի ժամանակ զինվորներին այդպիսի պահածոներ էին բաժանում: Այստեղ մարդիկ են ապրել, իսկ այժմ ամբողջ գյուղը պատված է մացառուտներով, և լոկ ծիեր են արածում:

Մաթիկ Միսակյանը Ալախաձեի Հովի. Թումանյանի անվան N 2 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում:

Մեր գյուղը մասամբ թալանեցին, բարեխախտարը, բացի տղամարդկանցից, գյուղից բոլորը հեռացել էին: Պատերազմից հետո մեր գյուղը վերանվանվեց Ալախաձիխ: Այստեղ հիմա հիմնականում համընտանիքներ, արխագներ ու ռուսներ

են բնակվում: Տարեցտարի շատանում է հայաստանցիների հոսքը՝ գալիս են վաստակելու: Հողն Արխագիայում իսկապես դրախտային է: Տատիկս ասում է, որ այս հողի մեջ ընկած սերմը չծլելու իրավունք չունի, և դա ճիշտ է:

Բացի այն, որ ցիտրուսային արքայությունն է տիրում երկրում, այստեղ մշակվում է ամեն ինչ: Եթե ուղղաթիռով օդ բարձրանաս, ապա մի սպիտակ տարածք կնշմարես: Դա մեր գյուղն է, որ պատված է համատարած ջերմոցներով, քանի որ այստեղ ամառ թե ձմեռ կանաչի են մշակում և վաճառում ռուսաստանյան սահմաններձ գոտում, ասեմ նաև՝ բավականին թանկ: Ամառը հանգստացողներին վարձով տուն են հատկացնում:

Արխագիայում գործում են երեք տասնյակից ավելի հայկական դպրոցներ: Մեր գյուղից դրանցից մեկն է: Ուսուցչական կազմը հիմնականում հայաստանյան բուհեր ավարտած և Արխագիա աշխատանքի ուղեգրվածներն են: Այժմ դպրոցը վերանորոգվում է մի համապարտադրված դպրոցի վերջին տարիներին երևանում ուսանել են մի քանի տասնյակ արխագաբայեր և միայն 4-5 հոգի են վերադարձել Արխագիա:

ՍԱԹԻԿ ՄԻՍԱԿՅԱՆ

ՊՈՇԶԻԱ



Պուկաս Սիրունյանը ծնվել է Աշտարակի շրջանի Ուջան գյուղում՝ տոհմիկ սասունցու ընտանիքում: Ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, աշխատել է տարբեր խմբագրություններում, այդ թվում՝ 11 տարի «Գարուն» ամսագրի պոեզիայի բաժնի վարիչ: Այժմ գլխավոր խմբագիր է աշխատում ՊՆ լրատվության և քարոզչության վարչությունում: 15 գրքի հեղինակ է:

Տարիներ առաջ «Գարուն» ամսագրում տպագրվեց նրա «Համշենցի» բանաստեղծությունը, որը շատ ջերմ ընդունելություն գտավ, ինչպես՝ ծնվեց այն. այս հարցով դիմեցինք հեղինակին:

- Վաղուց էր, 1984 թ 85 թվերին, ինչ-որ մի հանդիսության մասնակցելու համար մեկնել էի Աբխազիա: Իրիկնապահին դուրս էի եկել զբոսանքի և անդորր ու մեղմություն շնչող Գագրայի ծովափին հանդիպեցի մի հայ տղայի: Ժիր տղա էր, ուրախ շարժունակ, թիավարում էր իր փոքրիկ մակույկը:

Ծովի հարթության վրա ուրվագծվում էին վիթխարի շոգենավերը՝ աշխարհի մեծամեծ երկրներին պատկանող, մեծամեծ ջրեր ակոսող և դրանց մեջ, ահա, հայտնվել էր մի հայ տղա իր նավակով ... Դա կարծես թե խորհրդանշում էր մեր՝ հայերիս, վիճակը, որ համշենցի այդ խաժակն տղայի նման դուրս ենք եկել մեծ ծով՝ որսալու մեր հաջողության ծուկը:


Այն ժամանակ դեռ հեռու էր 88-ը, սակայն բոլորս մեր հոգու և երևակայության մեջ փայփայում էինք նրա տեսիլքը: Ահա այդ ապրումներից ծնունդ առավ այս բանաստեղծությունը:

ՀԱՄՇԵՆՑԻՆ

Սև ծովի ափին մի խաժակ տղա
Խոսեց Համշենցի հնոց բարբառով,
սիրտս ի ներս ասես տեղ ոսկի տեղայր,
մարգարիտ տեղայր Սև ծովի բոլոր:
Հետև էլ ծիծաղեց փոքրիկ համշենցին,
ծիծաղում էլ ասես բարբառով լիներ,
ամեն ինչի մեջ բարբառն էր իր հին
իրև սիրտ, ոգի և երագի թև:

Սև ծովի ափին փոքրիկ համշենցին
մի նավակ ունի՝ փոքրիկ իր նման,
հսկա նավերի միջով առանձին
գնում է բախտի, որսի իր ճամփան:
Սև ծովն ամենի փոքրիկ ունի,
երկինք ու երկիր խառնում է իրար...

Տեսեք, երգում է խաղաղված ափին
խաժակ տղեկը՝ շուրթին հայ բարբառ,
և իր նավակը՝ ելած փոքրիկից
ճոճվում է ափին զվարթ, անվնաս,
իսկ ծովի խորքում աճում է հանգիստ
էն ծուկը, որին դեռ պիտի որսա:



ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատմագիտության մեջ ապացուցված է, որ Սև ծովի հարավարևելյան ափերին հայ տարրը հաստատվել է դեռևս հայ ժողովրդի ձևավորման շրջանում: Դա ընդգրկում է Սամսոնից Բաթում ընկած մեծ տարածքը: Հետագա դարերում հայերի քաղաքական ու տնտեսական ազդեցությունը խիստ մեծանում է: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Քրիստոսից առաջ 2-1 դարերում հզոր Պոնտական կայսրության մեջ մտած խոշոր վարչատարածքային միավորներից մեկը կոչվում էր Փոքր Հայք: Այն հյուսիսից սահմանակից էր Մեծ Հայքի հստղայաց և Տայոց աշխարհներին, քաղաքական, տնտեսական, մշակութային սերտ կապեր ուներ Մեծ Հայքի թագավորության հետ, կառավարվում էր հայ իշխանների կողմից: Ծովային ուղիները, նավահանգիստները, բարեբեր երկիրն ու կլիման դեպի այս ափն էին ձգում տարբեր ժողովուրդների, սակայն հայերի արտագաղթը պայմանավորված էր նաև քաղաքական հանգամանքներով՝ մշտական պատերազմներ, թագավորության անկում, անկայուն վիճակներ և այլն: Անգամ այս տարածքներում հայերը անմասն չէին հայաստանյան իրադարձություններից. հայտնի է, որ Ավարայրով սկսված հայ-պարսկական մեծ պատերազմի ճակատամարտերից մեկը տեղի է ունենում այս տարածքում, որը միջնադարից սկսած հայտնի է Համշեն անունով:

Համշենի հայկական իշխանության հիմնադրման մասին հավաստի տեղեկություններ է հաղորդում իրադարձությունների ժամանակակից ու ակադեմիկոս Պրոֆ. Բաթումի 8-րդ դարի պատմիչ Ղևոնդը: Ըստ այս աղբյուրի՝ 788-790 թթ. արաբ ոստիկան /կառավարիչ/ Օբայդուլլահ իբն ալ-Մահդիի և սրա հաջորդ՝ Սուլեյմանի օրոք Հայաստանում ժողովրդի տնտեսական վիճակը խիստ վատթարանում է. շատերը հեռանում են երկրից: Դրանց թվում էին նաև նախարարական տների ներկայացուցիչներ: 788թ. Ամատունյաց նախարարական տնից Շապուհ պայազատի և նրա որդի Համամի գլխավորությամբ 12 հազար մարդ՝ հիմնականում Այրարատ նահանգի Արագածոտն և Կոտայք գավառներից, ճարահատ թողնում է բնակության վայրերը և բռնում գաղթի ճանապարհը: Վրաստանի սահմանի մոտ արաբական զորքը փորձում է կասեցնել նրանց, սակայն պարտվում է: Պատմիչն այդ մասին գրում է, որ հայերը «անցնում են Ակամսիս /Դորոխ/ գետը, որը բխելով Տայքի կողմերում՝ հոսում է հյուսիսարևմուտքով, անցնելով Եգերով, թափվում է Պոնտոս /Սեվ ծով/: Եվ երբ անցան գետը, հունաց կայսր Կոստանդինը շտապ լուր ստանալով կանչեց նրանց, պատիվներ տվեց նախարարներին ու նրանց հեծյալներին, իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց գեղեցիկ ու արգավանդ մի երկրում»:

789թ. Համամ Ամատունին բնակություն է հաստատում Տամբուր քաղաքում: Որոշ ժամանակ անց Համամի մորեղբայր վրաց իշխան Վաչգեան, որին Համամը մեղադրում էր դավադրության և դավաճանության մեջ, արաբների զինակցությամբ հարձակվում և ավերում է Տամբուր քաղաքը: Հետագայում ավերված քաղաքի տեղում Համամը կառուցում է նոր քաղաք և այն անվանում Համամաշեն, որից էլ ծագում է Համշեն անունը: Փաստորեն Համշենի հայկական իշխանությունը հիմնադրվում է 789-790 թթ.: Հետագա դարերում շարունակվում է հայերի հոսքը այս տարածքներ: Բյուզանդական կայսրության կազմում այս իշխանությունը ուներ կիսանկախ դրություն.

այն կարևոր դեր էր կատարում պետության արևելյան սահմանների ամրապնդման ու տնտեսական բարգավաճման գործում:
13-րդ դարում թուլացած կայսրության պոնտական ափի նահանգները խաչակրաց արշավանքների հետևանքով իսպառ քայքայվեցին, և հյուսիսարևելյան շրջաններում ձևավորվեց նոր պետական միավորում՝ Տրապիզոնի կայսրությունը, որի կազմում Համշենի իշխանության և, ընդհանրապես, հայության դերը մեծացավ թե ռազմաքաղաքական, թե հատկապես տնտեսական ասպարեզներում: Այդ ժամանակաշրջանում մինչև Կաֆա /Թեոդոսիա, Ղրիմ/ ընկած ծովափնյա տարածքներում 30-ից ավելի նավահանգստային քաղաքներում և առևտրատնտեսական կենտրոններում հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները կատարում էին կարևորագույն դեր:

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՀԱՄՇԵՆԻ ԵՒ ՀԱՄՇԵՆԱՆՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



Ըստ օտար աղբյուրների՝ հայերի թիվը մեծ էր բոլոր քաղաքներում. Կաֆայում կազմում էր բնակչության երկու երրորդը՝ 46 հազար մարդ /Եվրոպացիները Ղրիմն անվանում էին Ծովային Հայաստան/: Այս գործընթացներում բավականին մեծ էր համշենահայության մասնակցությունը:

Հատկապես ուշագրավ են հայ և օտար հեղինակների ու ճանապարհորդների վկայությունները Համշենի իշխանության ռազմաքաղաքական նշանակության և ուժի, նրա մղած պատերազմների, կառավարող իշխանների կատարած գործերի մասին: Այսպես՝ 1223թ. Իկոնիայի սուլթանության և Տրապիզոնի կայսրության միջև սկսված պատերազմում համշենահայերը վճռական դերակատարություն են ունենում՝ փակելով Տրապիզոն տանող ճանապարհը և գլխավոր քաղաքները սուլթանի զորքերը:

Լենկ-Թեմուրի տիրապետության շրջանում Համշենը պահպանում է կիսանկախ դրությունը: Ըստ 15-րդ դարի հեղինակ, Համշենում ճանապարհորդած Կլավիխոյի՝ Համշենն այնքան ուժ ուներ, որ իրաժարվում է Սպերի հզոր տիրոջ խնամակալությունից՝ վերջինիս պարտավորությունների մեջ թերանալու պատճառով:

Լենկ-Թեմուրի մահից հետո իրավիճակը փոխվում է. սկիզբ են առնում գահակալական երկարատև կռիվներ, որից օգտվում են Կարակոյունլու թուրքմենները՝ հաստատելով իրենց իշխանությունը: Թեև Համշենի իշխանությունը ընդունել էր վեջիններիս գերակայությունը, սակայն թուրքմենները ամեն կերպ փորձում էին սահմանափակել կամ վերացնել հայերի ինքնուրույնությունը: Բայց Համշենի իշխանները հաջողությամբ դիմակայում էին նրանց թե ռազմական, թե քաղաքական ճնշումներին:

Վիճակը կտրուկ վատթարացավ Բյուզանդական կայսրության անկումից հետո: 1453թ. Կոստանդնուպոլիսը

գրավելով՝ թուրքերը ներխուժեցին Եվրոպա, նվաճեցին ծովափնյա գրեթե բոլոր երկրները, իսկ 1461-ին՝ Տրապիզոնի կայսրությունը: Անգամ պետության անկումից հետո մոտ երեք տասնամյակ հայկական իշխանությունը հաղթական պատերազմներ է մղում Օսմանյան կայսրության դեմ՝ պահպանելով իր անկախությունը: Թուրքմենների և թուրքերի հզոր ուժի դեմ Համշենի իշխանությունը հերոսաբար կռվեց մոտ 70 տարի: 1489թ. ուղիղ 700 տարի գոյատևված Համշենի իշխանությունը պարտվում է. նրա վերջին իշխան Դավիթ Բ-ն ապաստան է գտնում Սպերի հայաբնակ գավառում:

Համշենի պատմության ամենահերոսական ու ողբերգական այս շրջանում դեկավարած իշխանների մասին պահպանվել է հետևյալ ժամանակագրությունը.

• ԱՆԱԹԵԼ - 1401-ից առաջ վտարվել է իշխանությունից, 1423-ին կրկին հիշատակվում է որպես Համշենի պարոնաց պարոն:

• ԴԱՎԻԹ Ա - հիշվում է 1425-1440 թթ.:

• ՎԱՐԴ - հիշվում է 1440թ.:

• ՎԵՔԵ - գերվել է 1460 թ.:

• ԴԱՎԻԹ Բ - իշխանությունից զրկվել է 1489-ից առաջ:

Հայ իշխանների փոխարեն կառավարիչ է նշանակվում թուրք վոյեվոդ, սակայն հայերի կիսանկախ վիճակը դեռ երկար պահպանվում է: Հենվելով 19-րդ դարի հեղինակ, Համշենում ճանապարհորդած Կ. Կոխի վկայությունների վրա՝ Հ.Տաշյանը գրում է. «Այդպիսի դժուարամուտ լեռանց մեջ դիրք էր իշխանաց կենտրոնը՝ դրուսին մը պահել: Նաև օսմանեան տիրապետութեան տակ երկար տևած է այս վիճակը և Քոխ գեղեցիկ կը նկարագրէ տակալին իւր ուղևորութեան ատեն շարունակուող այս դրութիւնը» /19-րդ դարի 40-ական թթ./:

Կիսանկախ վիճակը պահում էին նաև ծովափին սփռված բազմաթիվ բնակավայրեր, որոնք հիմնել էին Համշենից դուրս եկած հայերը: 19-րդ դարի սկզբին այդ վիճակը դեռ պահպանվում էր և, ըստ ժամանակակից վկայության, հետևանք էր այն բանի, որ բոլոր համշենահայերը «զինուոր գրուած են որդւոց որդի. և ունին զորապետ հայ իշխան, որ զիրենք կը կառավարէ. մարդէ ահ չունին». միայն տերեպեկիին հետ պատերազմ կերթան, և զօրաւոր մարդիկ են» /Մ.Բժշկեան/:

Համշենահայության համար մեծագույն աղետն սկսվում է 17-րդ դարի կեսերից, երբ Օսմանյան կայսրությունը սկսում է քրիստոնյաների բռնի մահմեդականացման ծրագրված քաղաքականությունը: Ծայր է առնում բռնությունների ու հալածանքների մի երկարատև շրջան, որը տեղատվություններով ու մակընթացություններով շարունակվում է մինչև 1820-ական թվականները: Հարցի լավագույն ուսումնասիրողներից Պ.Թումայանցը գրում է. «Բաւական տարիներ ետքը, երբ Համշեն գաւառը մնացող ժողովուրդը ամբողջ տաճկացուցին և հալածանքը Գարա-տերի վրայ դարձաւ՝ հազարաւոր ընտանիք ամէն բանէ զրկուած փախան Տրապիզոնի, Օրտուի, Իւնիայի, Չարշամպայի, Պաֆոսի, Սիմոպի և մինչև Ատապազարի գիւղերն ու քաղաքները»: Գրեթէ նույն ժամանակաշրջանում սկսվում է Երրոխի հովտի համշենահայերի /խոփե հեմշինների/ բռնի մահմեդականացումը:

(շարունակելի)
Լևոն Խաչիկյանի և Բարունակ Թողաքյանի աշխատությունների հիման վրա տեղեկագիրը պատրաստեց ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՅԱՆԸ

ИЗ АРХИВА

Трапезунд, расположенный по обоим склонам мыса, глубоко вдающегося в море, имел до войны 55 тыс. жителей, из них турок 25 тыс., греков 15 и армян 15 тыс. Амфитеатром спускающийся к морю и еще издали заметный своими белыми двух и трехэтажными домами и богатой растительностью, Трапезунд является одним из красивейших уголков черноморского побережья. Как торговый центр, и как место расхождения двух шоссейных дорог, чуть ли не единственных в Малой Азии, в жизни страны играл видную роль, являясь на большом радиусе источником снабжения населения произведениями фабрично-заводской промышленности, по преимуществу немецкой, французской и английской. В то же время он вел большую отпускную торговлю мелкими орешками, апельсинами, кукурузой и продуктами скотоводства.

Трапезунд достался нам совершенно нетронутым и неразрушенным, и, если бы не некоторые следы январской бомбардировки нашими судами, трудно было бы даже представить себе, что всего лишь несколько дней тому назад, после упорного сопротивления, оказанного нам в близлежащих пунктах, город был вынужденно оставлен и армией, и большинством населения. Мы вошли в город без выстрела, турки же, уходя, все оставили в целости - и свои роскошные дворцы, и переполненные товарами магазины, и большие запасы; мосты, дороги, важные стратегические пункты, водо-



провод, казармы и многое другое оставлено неразрушенным. Как объясняют местные греки, турки выражали полную уверенность получить Трапезунд обратно, и потому, как говорили, они "не хотят портить того добра, которое все равно опять должно перейти к ним".

Трапезунд является довольно благоустроенным городом. Здания здесь почти все двухи трехэтажные, отштукатуренные, красиво выкрашенные и снабженные массой балконов; многие из них имеют небольшие, хорошо содержимые садики с тропическими растениями. Улицы в городе шоссированы и хорошо содержатся. Мечети и общественные здания выделяются своей оригинальной восточной архитектурой. В городе имеется частичная канализация и водопровод; вода в последнем мутная, с массой плавающих осадков. Тротуары имеются почти везде. Было и уличное керосиновое освещение. Название улиц и нумерации домов не имеется. Поражает в городе обилие роскошных вполне европейских магазинов, с громадным выбором товаров на всякий вкус. Торговля была сосредоточена в руках греков и армян; турки занимались главным образом мелочной торговлей. В окрестностях Трапезунда, всего в 2-5 верстах, на склонах зеленых гор, расположены дачи местных богачей, причем дачи эти построены по типу городских зданий и снабжены садами с апельсины-

ми насаждениями и масляничными деревьями. Дачами этими пользовались не только летом, но и во всякое свободное время среди года.

Трапезунд, как и многие восточные города, имеет на улицах множество фонтанов для общего пользования.

До прихода русских, в городе был один, довольно плохой военный лазарет. Несмотря на то, что Трапезунд довольно чистенький город, что санитарные условия его удовлетворительные, постоянный приток полуголодных войск и совершенно голодных беженцев, с путей следования русской армии, создали условия, при которых эпидемии в городе за два последних года не переводились. Особенно свирепствовали здесь сыпной тиф и холера; трупы умерших часто валялись прямо на улице. Больные заразные от незаразных и от остального населения не изолировались. Дезинфекционной камеры в городе не было. Врачи - армяне и греки имелись в достаточном

Доклад А.Аргутинского Кавказскому Комитету съезда городов о командировке в Трапезунд

числе. Сейчас в городе заразных заболеваний нет. Из учебных заведений в Трапезунде имелись армянская мужская и женская гимназии и греческая мужская гимназия; турецкие учебные заведения были только низшего типа.

В городе издавались по одной турецкая и греческая газеты. Театра в городе нет. В греческих и армянских домах много роялей и пианино. Жизнь в городе была тихая, патриархальная. Греки и армяне пользовались здесь известной национальной самостоятельностью. Их только не допускали на правительственную службу и не разрешали им, и особенно армянам, приобретать оружие. В войска они принимались по преимуществу в нестроевые части.

Перед падением Трапезунда в нем ощущался большой недостаток в продуктах. Так, фунт сахара стоил 2р.50к., 1 пуд керосина 25р.; соли не было вовсе. Все остальное продавалось по дешевым ценам. Мясо стоило и теперь продается по 10к. фунт. Цены на мануфактурные товары при первом моем посещении города 6 апреля стояли обычные, довольно низкие, при втором же, 12 апреля, поднялись на 100-150%.

При нашем вступлении в город в нем оказалось жителей 15 тыс. - исключительно греков; турки все бежали, армяне же поголовно были турками вырезаны и потоплены в море. Спаслись от этой участи лишь 100-120 четников, ведших партизанскую войну и несколько сот детей; вырезаны и потоплены были армяне и в окрестных деревнях. По общим отзывам, жестокости, которые применялись к армянам в Трапезунде, превосходят своим изуверством все то, что применялось теми же турками по отношению к армянам в других местах. По словам греков, американского консула, протестантского миссионера, содержательницы местного отеля швейцарско-подданной, двух уцелевших армян миссионеров католиков, нескольких русско-подданных, найденных в городе, и оп-

роса тех немногих четников, которые успели узнать о падении Трапезунда и сошли с гор в город, общая картина истребления армян представляется в следующем виде.

Армян стали выселять из Трапезунда с июля 1915г., причем армянам-григорианам на сборы дали 5-6 дней, армян же католиков до поры до времени оставили в покое.

В первый же день были арестованы несколько сот молодых и влиятельных армян, под предлогом, что они изменники, способствующие успехам русских. Затем их стали усаживать на шаланды по 100 человек и увезли по на-



рять у армян детей мужского пола. Часть этих последних, которые были поздравнее, была роздана в турецкие семьи для обращения их в ислам и затем пользования ими в качестве даро-

вых работников, а остальные дети были или перебиты или, по свидетельству местных греков, как это ни чудовищно, были набиты в корзины, вывезены в море и потоплены.

Мне рассказывал капитан одного военного судна, что на днях море выбросило на берег Трапезунда 17 детских трупов. Большое число трупов было выброшено и на берегу Архаве. Когда турки бежали из Трапезунда, армянских детей, розданных в семьи, они подбросили грекам.

Дети эти теперь собираются представителями Батумского благотворительного общества, как в самом Трапезунде, так и в окрестных селениях. Таких детей собрано уже до 50: по указаниям греков, всего можно будет разыскать их до 1000 душ.

Часть детей от тяжелой участи была спасена греками, оказывавшими армянам в тяжелые для них минуты очень существенные услуги и проявившими в этом деле лучшие человеческие качества, часть же скрылась в близлежащих лесах, где жила в вырытых ямах, питаясь корнями растений, плодами и случайными подачками добросердечных людей.

Собранные в Трапезунде дети производят гнетущее впечатление: они оборваны, на вид болезненны, с испугом смотрят на всякого постороннего посетителя и даже тех попечителей, которые их приютили, все спрашивали, не будут ли они их резать. Я видел здесь мальчика, сына богатых родителей, к которому была приставлена гувернантка; теперь этот мальчик голый, больной, весь в коросте и язвах. Я видел несчастную двенадцатилетнюю девочку, беременную от насильников. Я видел девушку, дочь богатых родителей, европейски образованную, говорившую на многих языках, которая после убийства ее отца, матери и других родных, была отдана на поругание офицерам и переходила из рук в руки. И девочка и эта девушка близки к помешательству и несколько раз покушались на самоубийство. Трудно когда-либо забыть тот трагизм положения, который выражался в словах беременной девочки, все повторявшей, что она должна родить ребенка от злодея, который убил ее родных и разбил ее жизнь.

- Ժամանակավոր և մշտական արտագաղթն ունի գործազրկությունից զատ շատ ավելի խորքային պատճառներ, որոնց մեջ առանձնանում են անվստահությունը, շուկայական նոր տոցիալ-տնտեսական պայմանների չիմացությունը,
- Անարդարությունը, սոցիալական տարբեր բեռներում գտնվող մարդկանց նյութական, սոցիալական ու իրավական հնարավորությունների բացահայտ տարբերությունը,
- Անհուսության, «փակուղու», անպաշտպանվածության զգացումը,
- Հեռանկարի հանդեպ տագնապը,
- Վիրավորվածությունը:
Որպես մեթոդ ընտրված էր հարցազրույցը: Չնայած հարցաքննի գոյությանը, հարցազրույցը վարվել է բավական ազատ: Հարցազրույցների մեջ ընդգրկվել են արտագաղթածների ընտանիքներ, արտագաղթելու մտադրություն ունեցողներ, վերադարձածներ, մտավորականներ, բրոկերներ, տրանսպորտային, գրոսաշրջիկային, գովազդային գործակալություններ, կառավարման համակարգի աշխատողներ, կամայք ու տղամարդիկ, տարեցներ ու երիտասարդներ, քաղաքաբնակներ և գյուղաբնակներ: Ընդհանուր առմամբ գրանցվել է 100-ից ավելի զրույց, որոնցից մեկը իմ գրառմամբ և «Անառագաստ նավակներ» պայմանական վերնագրով ներկայացնում են «Ձայն համշենականի» ընթերցողներին: Զրուցակցի խնդրամաքով նրա անուն-ազգանունը չեն նշում:

ԱՆԱՌԱԳԱՍ ՆԱԿԱԿՆԵՐ

Կիսլովոդսկից Հայաստան վերադառնալու որոշումը ընդունելուց հետո գնացի Պյատիգորսկ՝ տոնս գնելու: Կիսլովոդսկ եկել էի Հայաստանից որևէ աշխատանք գտնելու հույսով: Արդեն տաս տարի էր՝ տեղափոխվել էի Հայաստան, մի քանի անհաջող փորձեր էի արել աշխատանք սկսելու և, երբ այլևս երևակայությունն ու հնարավորությունները հասնել էին զրոյական մակարդակի, իսկ պարտքերս՝ առասպելական թվերի, վճռական որոշում էի կայացրել գնալ Ռուսաստան: Հայաստան տեղափոխվել էի Տաջիկստանից: Դարաբաղյան իրադարձությունների ամենաթեժ փուլում Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեքում լցվել էր Սումգայիթից ու Բաքվից բռնագաղթած հայերով, որոնք իրենց ազգականների մոտ պատասխարան էին փնտրում: Տաջիկստանում ապրող մի քանի աղբյուրները սկսեցին լուրեր տարածել, որ հայերը շատ բացասաբար են տրամադրված մահմեդական ժողովուրդների նկատմամբ, որ 1988թ. Հայաստանի երկրաշարժի գոհերին Տաջիկստանի կառավարության և տաջիկ ժողովրդի բարյացակամ օգնությանը Հայաստանում վերաբերվել են արհամարհական հեզմանքով և այլն: Որոշ տաջիկական զինված խմբեր սկսեցին տարտամ, հետո ավելի կրքոտ սկսեցին խոսել հայ փախստականներին, և, առհասարակ, հայերին վտարելու մասին: Սումգայիթի և Բաքվի քաղաքի հուշերը այնքան թարմ էին, որ Տաջիկստանի հայերը արագորեն սկսեցին փախուստի մասին մտածել: Որոշում կայացվեց, որ առաջին հնարավորությունը պետք է օգտագործել կանանց, տարեցներին ու երեխաներին ուղարկելու: Տաջիկստանի կառավարությունը երեք ինքնաթիռ էր հատկացրել ահաբեկված հայերի տեղափոխության համար:
(շարունակությունը հաջորդ էջում)

«ՍԿԻՋԸ ՆԱՆՈՐԴ ԷՋՈՒՍ» Օրհանավակայանում հաստատվել էր, ամուր հայ տղաներ էին հայտնվում, որոնք փորձում էին կաշառել հայերի տեղափոխությունը կազմակերպող հայկական համայնքի ակտիվին ինքնաթիռում իրենց համար «տեղ գնելու», մարդիկ գոռում էին իրար վրա, տարեց մայրերը, ում որդիները դեռևս մնում էին, չէին ուզում հեռանալ և լաց լինելով խնդրում էին իրենց էլ թողնել վերջին գնացողների հետ: Այս հակասական կրքերի, տագնապների, հուզումների, լացի, մտահոգությունների ու մանր դավադրությունների մթնոլորտում հաջողվեց ինքնաթիռ նստեցնել միայն կանանց ու երեխաներին, տարեցներին, և ուղարկել Հայաստան: Մենք՝ տաղամարդիկ, և իրենց ամուսինների հետ մնացած մի քանի կանայք պատուհաններից հետևում էինք ռազմատեղի կոչերով շրջող երիտասարդներին, խորհրդակցում էինք, թե նրանց կողմից հարձակման դեպքում ի՞նչ պիտի անենք, մեր հարևան տաջիկներին խնդրում էինք ուտելիք բերել և քննարկում էինք Հայաստան կամ Ռուսաստան տեղափոխվելու հնարավորությունները: Մեր ընկեր տաջիկները մեզ զանգում էին և մի տեսակ ամոթահար պատմում, որ մի քանի հայերի կրպակներ են ջարդվել ու թալանվել, մի քանի հայերի ծեծել են, նույնիսկ, որ քան ինձ հայտնի է, մի հոգու սպանել էին, բայց դեպքերի զարգացումը հակահայկականից տեղափոխվում էր սոցիալական, ապա նաև քաղաքական հարթություն: Ի հայտ էին գալիս հեռուորներ, որոնք երկրի անկախության մասին էին խոսում, քաղաքական ռեժիմի փոփոխության մասին էին խոսում, և հակահայկականությունը աստիճանաբար դառնում էր երկրորդային:

Ընտանիքիս ետևից ես էլ եկա Հայաստան: Այդ օրերին Տաջիկստանում բնակարանների վաճառքի մասին մտածել դեռ հնարավոր չէր: Հայաստանը լցված էր փախստականներով, երկրաշարժից հետո տուն չունեցող մարդկանց ահեղի թիվ կար: Իմ ու իմ ազգականների բոլոր հնարավորությունները գործի դրեցի՝ Երևանի արվարձաններից մեկում բնակարան գնելու: Հայաստանում սկսվել էր Լենդոնի ճգնաժամը, հոսանք չկար, ջեռուցում չկար, նույնիսկ հաց չկար, աշխատատեղերը կրճատվում էին գլխապտույտ արագությամբ, այնպես որ ընտանիքիս ամենաառաջին խնդիրը՝ բնակարանի հարցը լուծելուց հետո որևէ աշխատանք գտնելու հույսով զննցի Ռուսաստան: Սկզբում կարծես թե ամեն ինչ հաջող էր: Հնարավոր եղավ մի քանի հոգով մերկի արտադրություն կազմակերպել, ընտանիքիս որոշ գումար էի ուղարկում գոյատևելու համար, և փորձում էի մաս-մաս վճարել բնակարանի համար արված պարտքեր: Մեզ շատ էր նեղում այդ տարիներին Ռուսաստանի հարավում՝ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում ակտիվացած հակահայկականությունը: Անընդհատ գալիս էին հարբած կազակներ, հոխորտանքով խոսում էին մեր կողմից իրենց հայրենիքը գողության մեջ, սպանելու մասին, ինչ որ գումարներ էին պահանջում: Այդ հակահայկական հիստերիան լարվում էր հատկապես ադրբեջանցիների կողմից տարածվող այն լուրերով, թե իբր հայերը աշխարհակալական տրամադրությունների ժողովուրդ են և Ռուսաստանում հաստատվելու նրանց փորձերը ծրագրավորված քաղաքականություն են: Դիմում էինք ոստիկանությունը ապարդյուն: Տեղի հնաբնակ հայերը փորձում էին մեզ պաշտպանել, բայց Ադրբեջանից և Աբխազիայից փախստական հայերի թիվը օրեցօր աճում էր: Նրանց մեջ էլ կային մարդիկ, որ աշխատանքի հույսը կորցնելով, գոյատևում էին մանր գողություններով, ինչը խտացնում էր հակահայկական բացասական մթնոլորտը: Երկրամասային իշխանություններն էլ օրը մի որոշում էին ընդունում, որոնք միտված էին ներգաղթի ճանապարհները փակելուն, գրանցումը դժվարացնելուն: Արդյունքում ամեն ինչ ի վերջո հանգում էր կաշառքների գումարների ավելացմանը:

Այդ օրերին մի անգամ եղա Հայաստանում: Չմայած գիտեի, թե ինչ է կատարվում, բայց այն, ինչ տեսա, շատ ավելի ծանր էր: Չմեռ էր: Երեխաներս հավաքվել էին մի սենյակում, որտեղ վառարան էր դրված և տունը լցված էր ծխով: Ցուրտ էր և շատ ճնշող: Գումարները, որ կարողանում էի ուղարկել, հազիվ հերիքում էին հացին ու վառելիքին: Երեխաներիս աչքերում դատապարտվածության և հուսահատության կնիք էր հայտնվել: Մտածեցի մնալ ընտանիքիս հետ և փորձել Հայաստանում աշխատել, գոնե կազատվել հայ լինելուս համար արդարանալու ամենօրյա սրտամաշ տառապանքից: Որոշեցի արտադրություն սկսել: Հայրենասիրությունս դեռ շատ ուժեղ էր, կարծում էի, որ արտադրությամբ պիտի նպաստեմ երկրի տնտեսության զարգացմանը և դեռ մի քանի մարդու էլ աշխատանք տամ: Շատերը առևտրով էին զբաղված, բայց ես առևտուրը մի տեսակ անպատվաբեր էի համարում: Գործընկեր գտա, աշխատանքը սկսեցինք: Պարտք վերցրինք գործընկերոջը ազգականներից: Վատահ էինք, որ մի տարուց պարտքերը կվերադարձնենք: Երկու տարի տե՛ս աշխատանքի նախապատրաստությունը, ընթացքը և տխուր ավարտը: Մինչ մենք պատրաստվում էինք արտադրանքը սպառողին հասցնել, Հայաստանը լցվեց արաբական էժան ներկով, ապա՝ եվրոպական, հատկապես գերմանական լավորակ ներկով: Մեր արտադրած ներկի ինքնարժեքն անգամ բարձր էր երկրում վաճառվող ներկի շուկայական արժեքից: Գործը տապալվեց, գործընկերոջս անարժեք կազմակերպող հասկանալի ճնշում էին գործադրում պարտքերը ետ վերադարձնելու համար: Գործընկերս ինձ էր մայրում դատապարտող հայացքով և աստիճանաբար մարդու հույսով:

Սակայն պարապ նստել չէր կարելի: Ինքս ինձ վրա հոգեբանական գրոհ կատարեցի՝ առևտրական գործունեության անցնելու: Մեկ տարի առևտուր սկսելու անհաջող

ծեռնարկումներից հետո կրկին վճռեցի գնալ Ռուսաստան. այլ էլք չէի տեսնում: Երեխաները մեծանում էին անհեռանկար ապագային ընդառաջ, և այս անհուսությունը կոտրում էր հպարտությունն ու մարդկային արժանապատվությունը: Հայաստանում ակնհայտ էին դարձել հաղթող կողմերը. դրանք միմյանց հետ ամուր թելերով կապված մի քանի ընտանիքներ էին, որոնք իշխում էին բոլոր լծակներին՝ իշխանությանը, փողին, կապերին, հնարավորություններին, նույնիսկ բնական պաշարներին: Հայաստանը աչքի առաջ աղքատանում էր, և աղքատացմանը զուգընթաց՝ չարանում: Աղքատացողները չարանում էին անգործությունից, անհուսությունից, երբեմն ուղղակի սովից: Երկրում սովին ու ցրտին ավելանում էր կարեկցանքի պակասը և անամոթությունը: Մեջս հասունանում էր վստահությունը, որ Հայաստանում ամենատեղ է կրկին փորձ անել, հետևյալս, որ շուրջ մարդ չէր մնացել, ում հետ կարող էի որևէ բան սկսել: Եղբայրս, որ նույնպես Տաջիկստանից էր տեղափոխվել, ինձ նման մի քանի անհաջող փորձերից

ԱՐՏԱԳԱՂԹ



հետո դառնացած վաճառել էր բնակարանը և ընտանիքով տեղափոխվել Եվրոպա, որտեղ ամբողջ մի գոյություն էր շարունակում: Ինձ շրջապատող մարդիկ նույնպիսի անհաջողակներ էին, ինչպիսին ես էի. ավելին, նրանք դեռ ինձնից էին սպասում որևէ վճռաբեկ գործողություն: Դեռ 45 տարեկան եմ, մտածեցի, բավական հարուստ փորձ ունեմ, կոմունիստների ժամանակ երազել եմ ինքնուրույն հնարավորությունների մասին, հարկավոր է ամեն ինչ նորից սկսել: Ռուսաստանից հուսադրող լուրեր էին գալիս, որ երկրի նոր պրեզիդենտ Պուտինը որոշ չափով կարգավորել է աշխատանքային հարաբերությունները, Ռուսաստանի ու Հայաստանի միջև համաձայնագիր է ստորագրվել երկու երկրների քաղաքացիների աշխատանքային իրավունքների մասին: Որոշեցի կրկին գնալ Ռուսաստան:

Մի լուրջ բարդություն կար: Ես ունեի Տաջիկստանի խորհրդային անձնագիր, ԽՍՀՄ այլևս չկար, որի քաղաքացին էի տաս տարի առաջ: Դիմեցի ՆԳ բաժին, ասացին, որ անհրաժեշտ է Տաջիկստանի զինվորական կոմիսարիատի հաշվառումից դուրս գալ, Հայաստանում կանգնել հաշվառման: Մի քանի անգամ գրեցի Տաջիկստան. ոչ մի պատասխան: Խնդրեցի Հայաստանի զինվորական կոմիսարիատին, որ իրենք պաշտոնական հարցում անեն: Մերժեցին, ասացին՝ դա մեր գործը չէ: Մի խոսքով, որոշ կաշառքով հաջողվեց հարցը լուծել և անձնագիր ստացա:

Չանգեցի Կիսլովոկսկ, որտեղ մի ազգական ունեմ, հարց ու փորձ արեցի, 500 դոլար կրկին պարտք արեցի և մեկնեցի: Երեք ամիս տե՛ս, մինչև վերջնականապես հանձնվեցի, որ իզուր եմ եկել: Ռուսաստան, իրոք, շատ էր փոխվել, երկիրը եռում էր նախաձեռնությունների ու աշխատողների պահանջից: Շատ բան կարելի էր անել, բայց դրամ էր պետք, գոնե գրանցում «գնելու», իրավապես ձևակերպվելու և որոշ նախնական ներդրում անելու համար: Այն խնդրի փորձերը, որ ես արեցի բացառապես մարդկային եռանդի շնորհիվ, ևս մի անգամ ապագուցեցին, որ իշխանությունների նեցուկ կանգնելու դեպքում այստեղ շատ բան կարելի է անել: Բայց ինձ կանգնեցնում էին յուրաքանչյուր քայլափոխի, ստուգում փաստաթղթերս, կասկածանքով զննում ոտքից գլուխ և... փող ուզում: Փող ուզում էին ցանկացած առիթով, ուղղակի՝ որովհետև սև ես, այսինքն՝ ռուս չես, որովհետև Հայաստանից ես, գրանցումը մեկ օր ուշացրել ես, հազուադեպ մաշված է... Ամեն ինչ կասկած էր ներշնչում, կամ գոնե այդպես էին ձևացնում, և ամեն օր հսկայական ինքնատիրապետում էր պետք՝ չպոթեկալու, չգոռալու, չխփելու...

Տեսա, որ այլևս չեմ կարողանում: Ես միայն աշխատել եմ ուզում, առանց գլուխ պահելու, նվիրվածությամբ: Դրա փոխարեն բոլորին պիտի համոզես, որ դու սրիկա չես, գող չես, տեռորիստ չես, և այդ ամենը ոչ թե նրա համար, որ իրապես գողերին, սրիկաներին ու տեռորիստներին են որոնում, կամ քեզ են կասկածում, այլ՝ որովհետև փող են ուզում: Պատրաստ էի նաև անընդհատ փող տալ, եթե ունենայի: Թողնեի աշխատեի, ազնվորեն աշխատեի, և տայի: Բայց աշխատել չէի կարողանում, փող չունեի, մնում էր միայն անարգանքը, սպառնալիք, շարունակական ինքնազայանքի անհրաժեշտությունը: Հարկավոր էր տուն վերադառնալ՝ Հայաստան: Գնալու ուրիշ տեղ ուղղակի չունեի, որևէ որոշակի ծրագիր չունեի, բայց մտքիս մեջ հյուսվում էր հերթական որոշումը՝ վաճառել բնակարանը, վերադառնալ Ռուսաստան, փորձել կրկին սկսել: Եվ հահ ես եկա Պյատիգորսկի Հայաստան գնացող ավտոբուսի տոմս գնելու: Ինքնաթիռի տոմսի դրամ չունեի, պետք է ավտոբուսով գնայի, որը ինչպես զուգաշարժ էին,

բոլոր հնարավոր ու անհնար կանգառներում ժամերով կասեցվում էր ճանապարհային ոստիկանության կողմից: Պյատիգորսկում առաջին իսկ հանդիպած ոստիկանը փաստաթղթեր պահանջեց: Տվեցի անձնագիրս: Խուզարկու հայացքով ոտքից գլուխ զննելուց հետո ասաց, որ խախտել եմ գրանցման կարգը. Ռուսաստանում հարկավոր է գրանցվել երեք օրվա ընթացքում, իսկ ինձ չորրորդ օրով է: Կրկնեցի տասնյակ անգամ արածս պատմությունը՝ Ռուսաստան եկել եմ ինքզայնի (ինքնաթիռի տոմսս ցույց տվեցի), ուրբաթ հնարավոր չէրավ գրանցվել, շաբաթ-կիրակի բոլոր հիմնարկները փակ էին, իսկ երկուշաբթի արդեն գրանցվել եմ: Իհարկե չհամոզեցի, փող ուզեցին: Ասացի, որ չունեմ: Սկսեց խուզարկել և գրպանիցս հանեց տոմսի համար նախատեսված գումարը՝ 2000 ռուսական ռուբլի: Ասացի, որ տոմս պիտի գնեմ, Հայաստան եմ վերադառնում: Առանց խոսելու հաշվեց 300 ռուբլի, վերցրեց, մնացածը վերադարձրեց և ասաց, որ ազատ եմ: Սուս ու փուս շարունակեցի ճանապարհ:

Տոմսակցում ասացին, որ Պյատիգորսկ-Երևան ուղեվարձն արժի 1450 ռուբլի, բայց տոմս գնելու անհրաժեշտություն չկա, կարող եմ դրամն անմիջապես վարորդին տալ: Վարորդին գտա, հետը պայմանավորվեցի հաջող օրվա համար և վերադարձա Կիսլովոկսկ: Այստեղ ազգականս և նրա հետ աշխատող տղաներից մեկը խնդրեցին մի քիչ գումար տանել Հայաստան, առաջինն իր ազգականներին, երկրորդը՝ իր ընտանիքին: Այդ «մի քիչը» 350 ԱՄՆ դոլար էր: Միաժամանակ զուգաշարժ, որ ավելի լավ է փողը թաքցնել, քանի որ ճանապարհին ստուգում են և կարող են ձեռքիցս վերցնել: Հաջորդ օրը եկա Երևան ուղևորվող ավտոբուսների կանգառը: Մոտ 60 տեղանոց ավտոբուս էր, զննողները 40 հոգի էին: Ավտոբուսները լիքն են գալիս Հայաստանից, բայց Ռուսաստանից վերադառնում են կիսատ, հիմնականում տանելով ինձ նման հուսախաբված անհաջողակներին: Վարորդը հավաքեց ուղեվարձը և շարժվեցինք: Ես խնդրեցի վարորդին վերցնել նաև իմ մոտի 350 դոլարը, բայց մտ հրաժարվեց: Համենայն դեպս խորհուրդ տվեց պահել, թաքցնել: Չգիտեի՝ որտեղ թաքցնեմ, ուղղակի դրեցի պիջակիս ծոցագրպանը: Մեկնեցինք լուռ, տխուր, ամեն մեկը իր մտքերի հետ: Բոլորի մեջ տագնապ կար, անհանգստություն թե ինչ է լինելու ճանապարհին: Հենց որ մտանք Կաբարդինո-Բալկարիա, ավտոբուսը կանգնեցին մաքսավորները: Երեք հոգի էին, մռայլ, անտրամադիր, կոպիտ: Պահանջեցին դուրս գալ ավտոբուսից, մեկը սկսեց ստուգել ավտոբուսը, մյուսները՝ ուղևորներին: Պահանջեցին հայերեն չխոսել, միայն ռուսերեն: Իրենք միմյանց հետ ռուսերեն չէին խոսում, խոսում էին կամ կաբարդերեն, կամ բալկարերեն: Պահանջեցին անձնագրերը: Իմ չարաբաստիկ անձնագիրը կրկին ուշադրություն գրավեց՝ «ինչու՞ երեք օրվա ընթացքում չես գրանցվել»: Կրկնեցի պատմությունը: Անձնագիրը լուռ վերադարձրին և փող ուզեցին՝ «100 դոլար»: Ասացի, որ փող չունեմ: Սկսեցին խուզարկել, հանեցին 350 դոլարը: «Ինչու՞ հայտարարագրված չէ»: Ասացի, որ Ռուսաստանի օրենքներով մինչև 500 դոլարը չի հայտարարագրվում: «Ով քեզ այդ օրենքները բացատրել է, նրա մոտ էլ գնա, իսկ իմ կարծիքով դու այս փողըդ ուղղակի գողացել ես, կգաս տեղամաս և այնտեղ բացատրություն կտաս: Միաժամանակ կբացատրես, թե որտեղի՞ց է ծանոթ քո դեմքը: Կարծես մեր տեղամասի ոստիկանության կողմից փնտրվող մարդկանցից մեկի լուսանկարը կպարզաբանի այդ խնդիրը»: Ողջ ինքնատիրապետունս հավաքելով՝ սկսեցի համոզել, որ դրամը ինձ չէ, որ եթե այդքան դրամ ունենայի, կգնայի ինքնաթիռով: Երկար տակարկելուց հետո համաձայնվեցին 50 մուբլով թույլ տալ ինձ ճանապարհս շարունակել: Մյուս ուղևորները նույն վիճակում էին, բայց երեքի խնդիրը ավելի բարդ էր: Նրանցից երկուսը խորհրդային կարմիր անձնագրերով էին, իսկ մի տարեց մարդ առիասարակ անձնագիր չունեց և ցույց էր տվել միայն զինգրքույկը: Այս երեքի համար «փրկագին» պահանջեցին՝ յուրաքանչյուրից 100-ական դոլար: Երեքն էլ համառորեն պնդում էին, որ փող չունեն: Մաքսավորները շրջվեցին և գնացին, բայց իրենց հետ տարան մեր փաստաթղթերը: Այնուհայտ էր, որ կամ այս երեքը պիտի «փրկագնվեին», կամ մենք բոլորս պիտի «փրկագնեինք» մեր փաստաթղթերը: Սկսեցինք խորհրդակցել՝ ի՞նչ անել: Տղամարդկանցից մեկը երկար համոզում էր այդ երեքին որոշ դրամ տալ մաքսավորներին, որպեսզի բոլորս ազատվեինք: Սրանք երկուսն էին, որ փող չունեն: Կոքերը բորբոքվում էին: Ցուրտ էր, սոված էինք, բոլորն էլ հոգնած էին: Ի վերջո, բոլորի հայացքներն ուղղվեցին ինձ. բոլորին հայտնի էր, որ մոտս 350 դոլար կա: Կարմրեցի, սկսեցի արդարանալ, բացատրել, որ իմ փողը չի, որ Հայաստանում առանց այդ էլ շատ պարտքեր ունեմ: Երեք հոգի սկսեցին ինձ համոզել, որ ոչինչ, հիմա դրամը տամ, Հայաստանում կստիպեմ պարտատերերից պարտքը վերադարձնել: Շուրջ երեք ժամ էր այդտեղ կանգնած էինք: Մի քանի անհաջող առարկություններից հետո ի վերջո կոտրվեցի: Մեկը գնաց մաքսավորների հետ բանակցելու և գործը գլուխ բերեց 100 դոլարով՝ երեքի համար: Դրամը տվեցի և ինքս իմ թուլության վրա չարացած՝ բարձրացա ավտոբուս: Շարժվեցինք: Կանայք բացեցին իրենց ուտելիքի կապոցները և սկսեցին ուտել՝ ամեն մեկը իր տեղը նստած: Ես էլ բացեցի ազգականներիս պատրաստած ուտելիքի կապոցը և տարեց մարդուն հրավիրեցի միասին ուտելու: Այս մարդը անընդհատ դժգոհում էր, փորձում էր բացատրել իր անհաջողությունները, հայիտյուն էր Հայաստանը. «Երկիր չդառավ, էլի», «անտեր ժողովուրդ ենք», «Ստալին է պետք, Ստալին, որ դրամն հարցերը լուծի», «սոված եկան իշխանության, լափում են, փափում են, չեն կշտանում»... Ես լուռ լսում էի և երազում, որ մա լռի:

ԱՐՏԱԳԱՂԹ

Իմ բաժին դառնություններն էլ ինձ հերիք էին: Ներքին ընթացությունն զսպելու համար սկսեցի նայել ուսողներին: Վաթսուհին մոտ կարծահասակ, գեր մի կին, առանց որևէ մեկին նայելու, ինքն իր մեջ փակված, մարած աչքերով կուլ էր տալիս ծամած կտորները: Ակնհայտ զգացվում էր, որ նա ոչ ուտելիքն է զգում, ոչ՝ կողքի մարդկանց, ոչ՝ իրավիճակը: Կրկին լսեցի գրուցակցիս. «Այ, կտեսնես, քո տված փողը չեն վերադարձնի: Մարդկանց մեջ էլ մարդկություն չի մնացել: Քաշոցի երկիր է, մեկը մյուսին քաշելով ապրում են»: Ասում էր մի տեսակ դաժան վստահությամբ և, կարծես, նույնիսկ քիմիաբանությամբ: Որոշեցի ձևացնել, թե քնում եմ: Կես քուն, կես արթուն՝ հիշեցի մի քանի ամիս առաջվա մի միջադեպ, որի ակամա ակամատեսն էի դարձել Լաչինում: Գնացել էի Լաչին աշխատանք գտնելու և վերադառնում էի Երևան: Առավոտյան վաղ ճատել էինք Երևան մեկնող մեքենան, որի վարորդն ու ուղևոր կանացից մեկը բարձրաձայն վիճում էին: Ուղևորուհին իր հիվանդ դատերը տանում էր Երևան, և վարչակազմը նրան Երևանի անվճար տոմսակ էր տվել, իսկ վարորդը հրաժարվում էր այդ տոմսակն ընդունել: «Ով տոմսակը տվել է, նա էլ թող տանի: Ամիսը քանի ծրի ուղևոր եմ տանում՝ դեռ ոչ մեկի դիմաց վարչակազմից վճար չեմ ստացել: Մինչև Երևան էլ ծամփին հինգ միլիցի փող պիտի տամ, մարդը 500 դրամ: Եղ վարչակազմը թե ուժ ունի՝ թող գոնե միլիցիայի բերանը փակի»: Կինը լաց էր լինում, դատերը ամուր գրկել էր ու լաց էր լինում: Ուղևորներից ոչ մեկը չէր միջամտում և միջամտելու բան էլ չկար. երկուսն էլ իրավացի էին, երկուսն էլ գոյության կռիվ էին մղում: Ի վերջո, վարորդը դժգոհ տեղի տվեց, մեքենան շարժվեց տանելով նաև մորն ու դատերը, որ մինչև Երևան մտալու լուռ գնացին առանց տեղից շարժվելու, առանց նույնիսկ միմյանց հետ խոսելու: Հիշում եմ, այն ժամանակ մտածում էի, թե աղքատության շարունակը որքան անհիմաստ է: Ընդհանրապես եմ, նրանք ոչինչ չեն իմանում, փոխարենը իրենք իրենց կամ միմյանց են տանջում: Արթնացա Կաբարդինո-Քալկարիան դուրս գալիս, երբ կրկին կանգնեցրին մաքսավորները: Հյուսիսային Օսեթիայի մաքսատանը մնացինք մոտ հինգ ժամ: Սկզբում բոլոր ուղևորներից պահանջում էին 20-ական ռուբլի: Բոլորն ընթացան, բողոքեցին: Մաքսավորները մեր փաստաթղթերը վերցրին և փակվեցին իրենց տնակում: Երկար խորհրդակցեցինք, ի վերջո որոշեցինք տալ այդ 20-ական ռուբլիները: Մեկին ուղարկեցինք բանակցելու: Գնաց, որոշ ժամանակ հետո վերադարձավ և ասաց, որ այժմ արդեն յուրաքանչյուրից 100 ռուբլի են ուզում: Հուզվում էր, լաց, բողոք: Մաքսավորներից մեկը մտոցեց և քննադատական ասաց, որ թույլ են տալիս ավտոբուսը մնա այդտեղ մինչև հաջորդ օրը: Ասաց ու գնաց: Կրկին քննարկումներ, դժգոհություն, հուզվածություն, անգոր գայություն: Երեք հոգով գնացինք, խնդրեցինք գրիմ իջեցնել: Կանգ առան 50 ռուբլու վրա: Արագորեն հավաքվեցին այդ 50-ական ռուբլիները. վախենում էինք, որ մաքսավորները միտքը կփոխեն: Կնքարեցինք ու շարժվեցինք: Վրաստանում ճանապարհային ոստիկանները կանգնեցնում էին կես ժամը մեկ: Լսել էինք, որ այստեղ որպես ոստիկան ծառայում են հիմնականում փախստական մեզերները: Ասում էին նաև, որ նրանց աշխատավարձ չեն տալիս, բայց հնարավորություն են տալիս կողոպտել ու կարող են: Իսկ մեզ կարող էին կողոպտել շատ հանգիստ: Սակայն Վրաստանում ուղևորների փաստաթղթերը մինչև սահման չէին ստուգում, միայն վարորդն էր իջնում, ինչ որ գումար էր տալիս, և դարձյալ շարժվում էինք: Վրաստանից դուրս գալիս վերջին մաքսատանը կրկին փաստաթղթեր ուզեցին, կրկնվեց կարմիր անձնագրերի տերերի պատմությունը, բայց հիմա էլ մի նոր խնդիր ծագեց: Ուղևորներից մեկը 4 տարեկան երեխայի հետ էր: Պարզվեց, որ երեխայի ծննդյան վկայականը թարգմանված չի, և վրացիները հայտարարեցին, որ կասկածում են, թե արդյո՞ք երեխան գողացված չի: Թող երեխայի տերը մնա, մինչև իրենք հարցը կպարզեն, մյուսները կարող են գնալ: Լաց, աղմուկ, խնդրանքներ, փող: Մենք կրկին շարժվում ենք: Լուռ ու մտայն: Ուտելիքը վերջացել է վաղուց, իսկ ճանապարհին ամեն ինչ շատ թանկ է, նույնիսկ հացը երեք անգամ թանկ է սովորականից: Իսկ մենք փող չուենք: Այդ ամենին էլ ավելացած այն սրտմաշակ մտահոգությունը, թե արդյո՞ք ինձ կհաջողվի ուղեկիցներիս համար տրված 100 դոլարը ետ ստանալ: Հայաստան հասանք լուռ, հոգնած, միմյանցից ավելի օտարացած: Ես մտածում էի, թե ի՞նչ պետք է ասեմ տանը, որտեղ հույսով սպասում եմ, և վախենում էի, որ կուտակված դառնություններս հենց այնտեղ՝ տանն էլ կպոռթկան: Ավտոբուսից իջանք մի տեսակ ամոթահար, համարյա միմյանց չնայելով: Ենթադրում եմ, որ բոլորն էլ մտորում էին իրենց սպասվող հանդիպման մասին: Ոչ մեկին չհիմավորեցին, նույնիսկ ուղեբեռով կանանց:

Լուսահողի կնքահորս՝ Կարմիր Արթինի /Կրմի Արթին/ Հարություն Նշանի թուղթերի պայծառ հիշատակին, որը 11 տարի վրեժ է լուծել թուրք ջարդարարներից, և որի հիշողությունների մի չնչին մասն են օգտագործել այս պատմության մեջ:

Եղեռնի մասին մեր պապերը՝ գյուղի մեծերը, չէին սիրում խոսել: Երբ այդ մասին իրար հետ զրուցելիս մոտենում էինք, կամ փոխում էին թեման, կամ անցնում մեզ համար անծանոթ թուրքերին, որը համաշխարհային ավագ սերնդի երկրորդ լեզուն էր, և իմ հասակակիցներից նրանք, ովքեր ունեին պապիկ-տատիկ, վարժ խոսում էին թուրքերեն: Ես այդ հնարավորությունից էլ էի զուրկ. ունեի Գանձակի մոտակայքի Շամքորի շրջանի Բարսում գյուղից 1914 թվին Քերսելյան Երվանդ պապիս մեր գյուղը հարս բերած մի քաղցրիկ տատիկ, որը թուրքերեն հասկանում էր, բայց խոսում էր հազվագյուտ դեպքերում, հարևան մեզերներին և հույների հետ: Մյուս տատիկս ու պապիկներս մահացել էին իմ ծնվելուց շատ առաջ:

Հազիվ թե չորրորդ դասարանում լինեի, երբ պատահաբար իմ ձեռքն ընկավ սովորաբար փրակ ամրացված մի փոքրիկ լուսանկար, որի վրա պատկերված էր խոժոռ հայացքով, ոչխարի մորթուց գլխարկը թեք դրած, բեղերը վերև ուղարկած, երկու փամփշտակալները կրծքի վրա «խաչքը-մեջքը» կապած, սրունքները մինչև ծնկներից վերև սպիտակ կտորով փաթաթած, երկար հրացանին հենված մի մարդ, որը զարմանալիորեն նման էր իմ մորական կողմից Ավետիս պապի (որը Երվանդ պապի մահանալուց հետո ամուսնացել էր տատիկիս հետ և մորս համար հանդիսացել հարազատ հայր) միակ նկարին: Նկարի տակ գրված էր. «Հայրուկ Հ. Մինասյան, Բուխարեստ»: Երբ տատիկիս հարցրի, թե ում էր պատկանում այդ նկարը, նա շտապ այն վերցրեց իմ ձեռքից և թաքցրեց ծոցում՝ խնդրելով, որ ոչ մեկին չպատմեմ նկարի մասին, ուղղակի մոռանամ դրա գոյության փաստը: Որոշ ժամանակ անց, երբ չկարողացա զսպել հետաքրքրասիրությունս և նորից դիմեցի տատիկիս, նա խորհուրդ տվեց, որ եթե անպայման ուզում եմ իմանալ մեր ընտանիքի այդ գաղտնիքը, ապա ճիշտ կլինի, որ դիմեմ իմ կնքահորս, քանի որ այդ մարդը և կնքահորս երկար տարիներ կողք-կողքի կռվել են հայրուկային ջոկատներում:

Կնքահորիցս իմացա, որ այդ նկարի մարդը Ավետիս պապիս և նրա կրտսեր եղբոր՝ Հարությունի եղբայրն է՝ Հովհաննես Մինասյանը՝ Հանձենի հայտնի հայրուկայետ Ջիլ Օհանեսը:

Կնքահայրս, որ այդ տարիներին ընդունվել էր կոմունիստական կուսակցության շարքերը, շատ ակտիվ և գործունյա մարդ էր: Չմայած կրթություն չուներ, բայց նշանակվել էր մեր կոլխոզում թեյազործների և ծխախոտագործների բրիգադավար և իր գործը կատարում էր արբորեն. ամեն առավոտ գիշերով շրջում էր գյուղի բոլոր տները և կանչում աշխատանքի: Չմայած լավ կազմակերպիչ էր, սակայն սեփական տնամերձում աշխատելու ժամանակ չէր գտնում, ինչը կնքամորս տրտնազոցների անսպասելի իր հանդիսանում:

Իմ հարցը կնքահորս շատ ջոկառեց: Նա խորհուրդ տվեց ընդհանրապես մոռանալ այդ նկարը և այլևս շատ չխորանալ դրա հետ կապված դեպքերի մեջ, քանի որ «կուսակցությունը արգելում է խոսել այն բաների մասին, որոնք կարող են մացուցանել կուսակցության տրամադրությունները իր հանդեպ»: Իմացա այնքան, որ ինձ համար միմիայն նկարով հայտնի պապիկիս այդ Հովհաննես Մինասյան եղբայրը եղել է քաջ անձնավորություն և «մեծ անախորժություններ է պատճառել թուրքերին»:

Արդեն հասուն հասակում իմացա, որ խորհրդային իշխանությունները, մեղմ ասած, չէին խրախուսում եղեռնի հետ կապված փաստերի հիշատակումները: Բայց, այսպես թե այնպես, գիտեմք, որ տեղի է ունեցել մի մեծ կոտորած, որի

հետևանքով մեր պապերը ստիպված են եղել հեռանալ իրենց հայրենիքից: Հակառակ դեպքում ինչու՞ էր Աճառ մորաքույրը /Օճառ մորաքույր, Չոք մոմը/ իր որդուն՝ Արթինին, կորցնելու թուրքիայում և հետո նորից գնալու նրան փնտրելու, գտնելու, ետ վերցնելու նրան թուրքական ընտանիքից և բերելու Աբխազիա, երբ նա իսպառ մոռացել էր հայերենը: Ինչու՞ էին հառաչում ծերունիները, երբ պարզ եղանակներին հայացքներն ուղղում էին դեպի ծովի կապույտ հեռաստանները և վիճում իրար հետ, թե արդյո՞ք հորիզոնի գծի վրա կուտակված ամպերի հետևից ուրվագծվողը հայրենի ծովափը չէ: Կերպարես, ինչու՞ էր ընկերոջս պապը մահվան մահճում, զգալով մոտալուտ վախճանը, պատվիրելու, որպեսզի իր դագաղը բակում դր-

ՎԳԵՂԱՄ ՄԵՆՊՅԱՆ ՎԱՐԴՈՒԿԸ

(Հատվածներ վիպակից)



վի դեմքով դեպի հարավ արևմուտք, որտեղ ինքը պարզ օրերին «միշտ տեսնում էր Օրդուի վերևի լեռան ուրվագծերը»:

Չմայած շատ հարցասեր էի, բայց ինձ զսպում էի ու հարցեր քիչ էի տալիս, մինչև այն օրը, երբ ձեռքս ընկավ Ծերուն թուղթում, կարծես թե թաքցված լի հարցեր: Կազմել էին նոր ընտանիք և սիրով ու համերաշխությամբ ապրեցին մինչև խոր ծերություն, այդպես էլ, ինչ համաշխարհային սովորության համաձայն, իրար անուր չստալով. նրանք իրար դիմելիս օգտագործում էին «տո» և «բա» բառերը: Կնքահայրս մահացավ համարյա հարյուր տարեկան հասակում՝ հիշողությունը լիովին պահպանած:

Ես լավ եմ գիտակցում, որ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն պատմությունը ոչ գիտական հետազոտություն է և ոչ էլ գեղարվեստական գործ: Միակ հավանություններ, որ տաժնում եմ, այն է, որ փորձ եմ արել անպաճույճ լեզվով, «սիրողական» մակարդակով ընթերցողին պատմել Հայկական հարցի այդ ոչ այնքան փոքր հատվածի մասին: Ընդ որում դեմքերից և դեպքերից շատերն այս պատմության մեջ վավերական են:

Մի քանի խոսք՝ իմ մասին: Ծնվել եմ 1941թ. Աբխազիայի Գուլրիփշի շրջանի Վերին Փշապի գյուղում: Հայրս՝ Գարեգինը, Օրդուի գավառակի Սնապցոց գեղի ընդարձակ կաղնու /պղնձի/ այգիների տեր, 1892 թվին Աբխազիա գաղթած Սնապյան Սիրիանի որդին էր: Նրա գաղթելու պատճառը հավանաբար եղել է այն, որ հայաջինջ քաղաքակրթությունը Օսմանյան պետության սահմաններում երբեք էլ չի ընդհատվել: Պապիս հետ եկել և մեր գյուղի հայկական մասն են հիմնադրել Ջանուկյանների, Յայլյանների և Սիմավոնյանների գերդաստանների նահապետներ Ալեքսանը, Արամը և Ավետիսը:

տանը «հյուրասիրվող» դերերեյին այս անգամ չէին կարողացել պատշաճ կերպով հյուրասիրել, առավել ևս, որ նա իր հետ բերել էր գերմանացի մի խումբ զինվորականների: Այդ ցիրուցան եղած ընտանիքից տարիներ անց գտնվեցին նրա եղբոր տղա Սեդրակը՝ Հունաստանից և քրոջ աղջիկը՝ Մարիամը, Ֆրանսիայից: Այդ օրվանից կնքահայրս լազտ քեշելու փետատը փոխել էր մոսին հրացանի հետ և զինվորագրվել հայրուկային շարժմանը:

Թուրքական կառավարության «ճեղքում» շնորհիլուց հետո կնքահայրս և իր զինակիցները շատերը գաղթել էին Աբխազիա, և նա կատակում էր, թե 1923 թվից այս կողմ իր ապրած կյանքն իր համար աստծու նվեր է:

1965 թ. հետո, երբ Հայաստանին թույլ տրվեց պետականորեն նշելու Ապրիլի 24-ը, եղեռնի մասին մեր գյուղերում սկսեցին խոսել ավելի ազատ, և դրանից հետո տարին մեկ անգամ Աբխազիայում բնակվող նախկին հայրուկ-

ները հավաքվում էին որևէ մեկի տանը և ծոխ սեղանների շուրջ ընկնում «Իգաբել-լա» գինի և վերիիշում իրենց զրկանքներով և հերոսացումներով լի կյանքը: Ափսոս, միայն, որ ես ոչ մի անգամ չմտածեցի խնդրել այդ հավաքներին մասնակցելու թույլատվություն, իսկ մասնակիցներից երևի թե ոչ ոք չմտածեց վավերագրել այդ հանդիպումները, արձանագրել այն, ինչ կարող էր մտնել հայոց պատմության մեջ որպես նրա հերոսական մի էջ:

Աբխազիայում կնքահայրս՝ համարյա կարմիր մազերով, շեկ, փարթամ բեղերը դեպի վեր ուղարկած, թիկնեղ և հաղթանալով, չափազանց բարեսիրտ մի երիտասարդ, շուտով հանդիպել էր նույնպես իր ընտանիքը կորցրած կնքամորս՝ Հերիքեմարին: Կազմել էին նոր ընտանիք և սիրով ու համերաշխությամբ ապրեցին մինչև խոր ծերություն, այդպես էլ, ինչ համաշխարհային սովորության համաձայն, իրար անուր չստալով. նրանք իրար դիմելիս օգտագործում էին «տո» և «բա» բառերը: Կնքահայրս մահացավ համարյա հարյուր տարեկան հասակում՝ հիշողությունը լիովին պահպանած:

Ես լավ եմ գիտակցում, որ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն պատմությունը ոչ գիտական հետազոտություն է և ոչ էլ գեղարվեստական գործ: Միակ հավանություններ, որ տաժնում եմ, այն է, որ փորձ եմ արել անպաճույճ լեզվով, «սիրողական» մակարդակով ընթերցողին պատմել Հայկական հարցի այդ ոչ այնքան փոքր հատվածի մասին: Ընդ որում դեմքերից և դեպքերից շատերն այս պատմության մեջ վավերական են:

Մի քանի խոսք՝ իմ մասին: Ծնվել եմ 1941թ. Աբխազիայի Գուլրիփշի շրջանի Վերին Փշապի գյուղում: Հայրս՝ Գարեգինը, Օրդուի գավառակի Սնապցոց գեղի ընդարձակ կաղնու /պղնձի/ այգիների տեր, 1892 թվին Աբխազիա գաղթած Սնապյան Սիրիանի որդին էր: Նրա գաղթելու պատճառը հավանաբար եղել է այն, որ հայաջինջ քաղաքակրթությունը Օսմանյան պետության սահմաններում երբեք էլ չի ընդհատվել: Պապիս հետ եկել և մեր գյուղի հայկական մասն են հիմնադրել Ջանուկյանների, Յայլյանների և Սիմավոնյանների գերդաստանների նահապետներ Ալեքսանը, Արամը և Ավետիսը:

Սովորել եմ հարևան գյուղի՝ Բոգափոստայի, հայկական միջնակարգ դպրոցում: Ավարտել եմ Սուխումի Մերձարևադարձային տնտեսության ինստիտուտի գյուղատնտեսական հումքի վերամշակման տեխնոլոգիայի բաժինը: 1969-ից աշխատել և ասպիրանտուրայում կրթությունս եմ շարունակել Հայաստանում: Պաշտպանել եմ թեկնածուական /1975թ., Մոսկվա/ և դոկտորական /1990թ., Երևան/ ատենախոսություններ: 1993թ. ընտրվել եմ Իտալիայի հաղողի և զինու սկադեմիայի անդամ: Հայաստանում և արտասահմանյան գիտական մամուլում հրատարակել եմ ավելի քան 160 աշխատանք, ներառյալ 12 գյուտ, մենագրություններ, ձեռնարկներ:

ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

1978թ. «Պիոներ կանչ» թերթում մեր նախածեռնությամբ հրատարակվեց դպրոցականներին ուղղված կոչ՝ բարբառներով գրառելու և խմբագրություն ուղարկելու իրենց տատիկներից ու պապիկներից, մեծահասակներից լսած հեքիաթները, գրույցները, ավանդությունները, երգերը, խաղիկները (մանի-ներ), հանելուկները, առած-ասացվածքները և այլն: Կոչը լայն արձագանք գտավ Հայաստանի, Վրաստանի, Աբխազիայի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի, Ռուսաստանի Կրասնոդարի

երկրամասի հայկական դպրոցների աշակերտության շրջանում: Նրանց գրառած բանահյուսության լավագույն նմուշները պարբերաբար հրատարակեցին թերթում, իսկ 1981-ին՝ «Հրեղեն ձին» ժողովածուում: Գրքի լույս ընծայումից ոգևորված շատ դպրոցականներ շարունակում էին նորանոր նյութեր ուղարկել, որոնցից լավագույնները ընդգրկվեցին «Թագավորի երագները» ժողովածուի մեջ, որի տպագրությունը այլևայլ պատճառներով շուրջ երկու տասնամյակ ձգձգվեց և իրագործվեց միայն

2003թ.: Ստորև «Թագավորի երագները» գրքից մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Համշենի բարբառով գրառված նյութերը և կոչ անում ոչ միայն աշակերտներին, այլև դպրոցական նստարանը վաղուց լքած մարդկանց՝ գրառել Համշենի չքնաղ բարբառով բանահյուսության նմուշներ և ուղարկել «Ձայն համշենականի» խմբագրություն, որպեսզի լավագույնները հրատարակվեն թերթում:

Ս. Վարդանյան

ԷՐԳՈՒ ԸՆԳԵՐ

Մալատ կեղըն մաշտ մը կուկա Ջենիգ, հնու ատտեղ ընգեր մը կղնու գու: Ըմն Ջենիգ էգուշին աղու դոնը գինար գու: Իրած հեղ շաղ լավ էյնը: Ավուրը մեզը Ջենիգին մաշտը գեշտա Մալատ: Կուկա ընգերեճը դուրը: Պարև գուդա, ամա աղ գասա տա ուրիճը ջոնճիլ չի: Ջենիգճին գեշտա սարին, ծառեճ մը դագ բարգի գու: Էդի ակվընճու կելլա կուկա դուրը:

Օմսուճը ետկը Մալատու ընգերը հեճնու գու էշը, կուկա Ջենիգ: Կորճերը ըղաճըն ետկը գեշտա ընգերեճը դուրը: Ջենիգճին աղու լավ մը գուդեճնա-խմեճնա գու: Քեճը շինաճն ետկը գասա:

– Դո՛, այճն ալ ըմն իրիգուն կուկա լագղս գուդա: Ըմն իրիգուն բեղ գնիմ, ամա դահա չայճի գայնիլ:

Մալատու ընգերը գասա տա:
– Հայդի իրիգունս իրար հեղ բեղ ընիճկ: Ես լավ ավճի իմ, իրիգունս աղ այճը գայնիմ գու:

Ջենիգին ընգերը խալվուտ ուր գնեճը գասա տա:
– Մենկ օր էշտոնկ այճ բեղ ընուշի, իսու էշը քշա լագղն ինտուս:
Գեշտոն բեղ ընուշ: Մեմալ գաշին՝ ինճիճը նահրա գու լագղը ուղուշ:

– Դո՛, – գասա լագղին դերը,-աս գլլի օր այճը գլլի:
Մալատճին քաշա թվոնճը, լուսնյագ-լուսին, ինճ օր դեսնու գու, ընու յալ գրագա գու: Մողիգ գեշտոն, գաշին օր գայնաճը ուր էշն ա:

– Դո՛, – գասա ջենիգճին, – Մալատ կուկոմ՝ ընգերեճը ջոնճիլ չիս, Ջենիգ կուկաս՝ էշը ջոնճիլ չիս:

Գրառող՝ Արաքսյա Բոջոյան,

Աբխազիա, Գագրայի Խ.Աբովյանի անվ. հայկ. դպրոց, 9-րդ դաս.:

Ջենիգ – Տրապիգոնի նահանգի Սամսոն քաղաքը և գավառը
Մալատ – գյուղ Տրապիգոնի նահանգի
Չարշամպա գավառակում
Կորճերը ըղաճըն ետկը – գորճերն անելուց հետո
Լագղն ինտուս – եգիպտացորենի արտի կողմը, արտի մեջ
Քեճը շինաճըն ետկը – հյուրասիրելուց, պատվելուց հետո
Ջայնաճը – սպանաճը, կրակաճը
Չայճի գայնիլ – չկարողացա սպանել
Ակվընճու – առավոտյան
Ընգերեճը դուրը – ընկերոջ տունը
Չառեճ մը դագ – մի ծառի տակ
Գինար գու – կենում էր, մնում էր
Բեղ գնիմ – սպասում եմ
Լագղ – եգիպտացորեն
Լավ էյնը – լավ էին
Օմսու մը – մի ամիս
Ավուրը մեզը – մի օր
Իրած հեղ – իրար հետ

Ինճիճը – ինչ-որ բան
Խալվուտ – թաքուն
Ատտեղ – այստեղ
Էգուշին – գալուց
Էշտոնկ – գնանք
Գնեճը – կնոջը
Մեմալ – մեկ էլ
Այճ – արջ
Ջոնճիլ չի – չի ճանաչում
Նահրա գու – սկսում է
Թվոնճ – թվանք, հրացան
Գրագա գու – կրակում է
Ռիբինը – իրեն
Էդի – հաջորդ
Կեղ – գյուղ
Մաշտ – մարդ
Հայդի – արի
Ավճի – որսորդ
Ըմն – ամեն
Դուրը – տունը
Ուղուշ – ուտել
Ուր – իր

ՀՈՒՆ ՉՈՆՆՈՂ ԿԵՂԸ

Մաշտուն մեզը գեշտա անճանոտ կեղ մը, ինքը ուրիճը տիրեճ դեղ տնա գու, պոնին աղու խաս մը ձեճին ու ջոնպու տնին գու, հնու ալ գասին:

– Կարար գնեյ տա շուճն չոննող կեղ ընգաճ ա, ըռոնճ պիր մոն կուկար:

Գրառող՝ Գ. Զաքարյան,

Աբխազիա, Գագրայի Խ.Աբովյանի անվ. հայկ. դպրոց, 10-րդ դաս.:

Կարար գնեյ տա – կարծում էր թե
Ինքը ուրիճը – ինքն իրեն
Մաշտ – մարդ
Գեշտա – գնում է
Կեղ – գյուղ

Չոննող – չունեցող
Ջոնպա – ճամպա
Հնու ալ – համ էլ
Պիր – բիր, փայտ

ԹՐԵՎ ԵԿՈՂ ՀԱՎԸ

Գիրագի օր մը Օսկեզը հավ մը տրած գեճաղը ակվընա գեշտա բագարը, իրիգվընա դուստառճին դեսնուճ գու ալի հավը գեճաղին ետ պերա գու:

– Օսկեճ, թաք հավը դարիր բագար, ըն ալ առնող չըղա՞վ տա,- հայճոնին գու տրգիցնին:

– Չա՛, ջանըմ, տունք ալ, ծախուշ դարած չունեյը: Աս միր օնդեր հավը սովորուտին մը ունի, գեշտա աստին – ընտին չորտերուն գաճա: Ես ալ աղու հոմար տրի գեճաղին նես, հեղս դարի – պերի, հնոր հավգիտը գոյսըվի հեջ:

Ասացող՝ Գրիշա Դանիելյան,

Ծնվ. 1938թ. Աբխազիայի Սուխումի շրջ. Ազանթա գյուղում,

բնակվում է Աբովյան քաղ.:

Գրառող՝ որդին, Լեսոն Դանիելյան,

ք. Աբովյան, թիվ 7 դպրոց, 5-րդ դաս. (Կուրայքի մարզ):

Գիրագի – Կիրակի
Գեճաղ – գամբյուղ
Ակվընա – առավոտյան
Իրիգվընա – երեկոյան

Դեսնուն գու – տեսնում եմ
Չորտերուն – թփուտներում
Գոյսըվի հեջ – չկորսվի
Հնոր – որպեսզի

ՏԱՆ ՏԵՐԸ

Մաշտ ու գնիգ մը գլլին, աղեր իրար հեղ վիրա գովեյնը գու: Մաշտը գնեճնըն շաղ վախեր գու: Օր մը գնիգը փաղը գառնու, մաշտուն հեղը կըյնի: Աս մաշտը մղնու գու սեղնին դագ: Աղ սրըն դուրը մաշտ կուկա: Գաշին մաշտը սեղնին դագ մղաճ ա:

– Հող ի՞նճ գնիս, – գասին:
Ըն ալ գասա տա:
– Դոնը դեյն իմ, վեյ ծագը ուզիմ, հուն մղնում գու:

Գրառող՝ Զուլիֆա Գոգոյան,

Աբխազիա, Ծեբելդայի հայկ. դպրոց, 6-րդ դաս.:

Դոնը դեյն իմ – տան տերն եմ
Աղ սրըն – այդ ժամանակ
Վիրա – միշտ

Հեղը կըյնի – ետևից է ընկնում
Գովեյնը գու – կռվում էին

Գնեճնըն – կնոջից
Փաղը – փայտը
Մաշտ – մարդ
Աղեր – դրանք

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Համշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպության խորհուրդը տեղեկացնում է, որ ստեղծվում է «Համշեն» երգի-պարի ազգագրական համույթ: Մասնակցել ցանկացողները դիմեն խմբագրություն:

Գլխավոր խմբագիր Սերգեյ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Համշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն:
Հասցեն՝ Երևան, Ա. Իսահակյան 18:
Հեռախոս՝ (+374 1) 25.21.26
Գրանցման վկայական՝ N 03U054979
Տրված՝ 26.06.2002 թ.
Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին:
Արտատպության կամ մեքերման դեպքում հղումը «Ձայն համշենականին» պարտադիր է:
e-mail. dzaynhamshenakan@yahoo.com

ԱՌԱԾԱՆԻ

Աբրըն արողը թոնին փչա գու:
Այչը ուր թաքը լիգա գու:
Աղու ալուրը մաղվաճ ա:
Բարաք ճըվալը չի գոյնիլ:
Դալնուգ գասիմ՝ հայսնագ լըսա:
Ըմըն միրուկ օննող դերա չա:
Հավկը հավին՝ մի հաշվիլ թավին:

Անդրանիկ Զեյթունյանի հավաքածուից



ՄԱՆԻՆԵՐ ՔԵՄԵՆՉԵՒ ՄԱՍԻՆ

Ինա վերթին փշերը, Քամաչաղ ալ խըշըր ա, Հայըս քեզի ախճիգ չի դալ, Կընա խելըղը գըշըռա:
Ես քամաչա չալիմ գու, Մաղըս թելին նալիմ գու, Քասուն խախցեք բուլգընեք, Բալքի մեզիդ հավնիմ գու:
Քամաչն զիլ չալիմ գու, Սըրա բարը քաշիմ գու, Բարին նես փիս մընիջուն Մընիս ջագրին նալիմ գու:
Քեմենչե մ՛ուճիմ կոնչե կու, Տեսած մաշտը ճոնչե կու, Կղնի պարին մեջտեղը Փարա տեյի կոնչե կու:
Քեմենչեն կափաղ չունի, Կնքերը փափախ չունի, Կնքակինը պար մտավ, Կնքերը խապար չունի:

Խըշըր- անսարք
Հայըս- հայրս
Խելըղը գըշըռա- խելըղ կշռի
Քասուն- գեղեցիկ
Բուլգընեք- աղջիկներ
Կնքերը - կնքահայրը
Վերթին - վերևում
Նալիմ գու - խփում եմ

Անդրանիկ Զեյթունյանի և Բարունակ Թողաքյանի հավաքածուներից

